

## ԱՍՏԼԻՊԿԱՆ ՊԱՏՈՒՐԱԿՈՒԹԻՒՆ ՍԸ ԸՆԴՈՒՆԵՅՑ

Երկուշաբթի, 2 Մարտ 2020-ին, ՍԱՆԱ հաղորդեց, որ Սուրիոյ Նախագահ Պաշար ալ Ասատ ընդունեց լիպիական պատուիրակութիւն մը՝ Լիպիոյ փոխվարչապետ Ապտուլ Ռահման Ռահայրաշի Նախագահութեամբ:



Հանդիպումի ընթացքին կողմերը խորհրդակցեցան Սուրիոյ եւ Լիպիոյ քաղաքական վերջին զարգացումներուն շուրջ: Անոնք շեշտեցին, որ Սուրիա եւ Լիպիա կը պատերազմին նոյն թշնամիին դէմ

եւ կը տառապին արտաքին տարաբնոյթ միջամտութիւններէ: Կողմերը խորհրդակցեցան նաեւ երկու երկիրներուն միջեւ տարբեր մակարդակներով գործակցութիւնը վերաշխուժացնելու եւ դիւանագիտական յարաբերութիւնները ամրապնդելու մասին:

Հանդիպումին ներկայ գտնուեցան Սուրիոյ արտաքին գործոց Նախարար Ռալիխ ալ Մուալլէմ, փոխնախարար Ֆայսալ Մըքտատ եւ Սուրիոյ Նախագահութեան տեղեկատուական եւ քաղաքական խորհրդատու դոկտ. Պուսայնա Շաապան:

## ՍՈՒՐԻՈՅ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԽՍՏԻ ՊԱՏԱՊԱՐՏԵՅՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐՈՒՆ ԻՏԼԻՊ ԹԱՓԱՆՅՈՒՄԸ

Չորեքշաբթի, 4 Մարտ 2020-ին, ՍԱՆԱ հաղորդեց, որ Սուրիոյ Արտաքին Գործոց Նախարարութիւնը հանդէս եկաւ հաղորդագրութեամբ, յայտնելով, որ ամերիկացի պատասխանատուներ, թրքական կողմին հետ գործակցաբար, ապօրինի ճամբով Իտլիա թափանցած են, անգամ մը եւս փաստելով, որ ամերիկեան վարչակազմը ինքզինք պետութիւններու գերիշխանութեան պահպանումը յարգող միջազգային օրէնքն եւ ՄԱԿ-ի Միջազգային Ուխտի պայմանագիրն զերադաս կը համարէ:



Աղբիւրը աւելցուց. «Սուրիա խստիւ կը դատապարտէ ամերիկեան վարչակազմին որդեգրած թշնամական քաղաքականութիւնը, որ անսպասելի էր, որովհետեւ ԱՄՆ սուրիական պատերազմի ամբողջ տեւողութեան, տարբեր ձեւերով զօրակից կը կանգնէր ահաբեկիչներուն՝ անտեսելով ՄԱԿ-ի որոշումները»:

## ՊԱՏԱՍԿՈՍԻ ՄԵՋ ԼԻՊԻԿԱՆ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆ ԴԻՏԻ ՎԵՐԱԲԱՅՈՒԻ



Յայտնութիւն կը քննարկուի մէջ վերաբանալու Լիպիոյ դեսպանատունը, ամրապնդելու երկու բարեկամ երկիրներու դիւանագիտական յարաբերութիւնը:

Երեքշաբթի, 3 Մարտ 2020-ին, ՍԱՆԱ հաղորդեց, որ քանի մը օր առաջ Սուրիոյ արտաքին գործոց Նախարարին եւ լիպիական կառավարութեան պատուիրակութեան միջեւ տեղի ունեցած խորհրդաժողովի ակարտիս, կողմերը համա-

## ՀԱՊՈՐՎԱԳՐՈՒԹԻՒՆ

### ԱՄՐՏԵՅՑԱԻ ՀԱՅ ԴԱՏԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԵՐՈՒ ԵՒ ԳՐԱՏԵՆԵԱԿՆԵՐՈՒ ՀՆԳՈՐԵԱՅ ՀԱՍՏՈՂՈՎԸ

24-28 Փետրուար 2020-ին, Երեւանի եւ Ստեփանակերտի մէջ գումարուեցաւ ՀՀԴ Հայ Դատի յանձնախումբերու եւ գրասենեակներու համաժողովը:

Համաժողովին մասնակցեցան Հայ Դատի աւելի քան 20 յանձնախումբերէն, գրասենեակներէն եւ ՀՀԴ կուսակցական մարմիններէն մօտ 50 ներկայացուցիչներ:

Համաժողովը քննարկեց Հայ Դատի աշխատանքներու ընթացքը 2019-ի Յունուարէն առ այսօր: Լսեց զեկոյցներ Հայաստանի Հանրապետութեան արտաքին քաղաքականութեան մարտահրաւերներու եւ ՀՀ ներքաղաքական իրավիճակի մասին:



Խորհրդաժողովի օրակարգին հիմնական կետերն էին.

- ՀՀ-ի ի նպաստ իրագրելու (ոպպիիսկ) աշխատանքներ.
- Պայքարը Արցախի իրաւական միջազգային ճանաչումին համար եւ Ատրպեյճանի հակահայ քաղաքականութեան դէմ. Արցախի բարեկամներու ցանցի աշխուժացում.
- Աշխատանքներ Հայոց Ցեղասպանութեան միջազգային ճանաչումին եւ պահանջատիրական պայքարին ուղղութեամբ.
- Ձաւախքի հայութեան իրաւունքներու պաշտպանութեան ուղղութեամբ Նախաձեռնութիւններ.
- Նախիջեւանի հայկական ինքնութեան արժարժում միջազգային շրջանակներու մօտ.
- Սերի դաշնագրի եւ Հայաստան-Թուրքիա սահմանին մասին Ուիլսոնեան իրաւարար վճիռի 100-ամեակի քաղաքական բովանդակութեամբ նշում.
- Մոսկուայի եւ Կարսի դաշնագիրներու 100-ամեակ. անոնց հետեւանքներու սրբագրութեան եւ վերացնելու ձեւերը.
- Սուրիոյ, Լիբանանի, ընդհանրապէս Մերձավոր Արեւելքի հայութեան աջակցութիւն (տեղւոյն վրայ եւ Հայաստանի մէջ).
- Հայ Դատի յանձնախումբերու եւ գրասենեակներու հնարաւորութիւններու զարգացում:
- Համաժողովը իւրաքանչիւր հարցի մասին հանեց համապատասխան եզրակացութիւններ՝ յառաջիկայ գործունեութեան մասին:
- Համաժողովը մտահոգութիւն արձանագրեց Արցախի հիմնախնդրի խաղաղ կարգաւորման բանակցութիւններու ներկայ փուլին շուրջ ստեղծուած անորոշութիւններու գծով, եւ շեշտեց կարեւորութիւնը հայկական քաղաքական բոլոր ուժերու կողմէ վերահաստատումին թէ՛ Արցախի Հանրապետութեան միջազգային ճանաչումը առաջնահերթութիւն է կարգաւորման գործընթացին մէջ:
- Համաժողովին ողջոյնի ուղերձով հանդէս եկաւ Արցախի Հանրապետութեան Նախագահ Բակօ Սահակեանը, որու ՀՀԴ Հայ Դատի կեդրոնական խորհուրդը պարգեւատրեց «Երախտագիտութիւն» մետալով՝ «Արցախի Հանրապետութեան միջազգային ճանաչմանն ուղղուած ակտիւ գործունեութեան, Արցախ-Սփիւռք կապերի ամրապնդման ու զարգացման գործում ներդրած նշանակալի անւնդի համար»: ՀՀԴ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատուրեանը ստանձնելով մետալը, յայտնեց, որ այն գնահատական է ամբողջ Հայ Դատի համակարգի գործունեութեան:

ՀՀԴ Հայ Դատի Կեդրոնական Խորհուրդ  
 Երեւան, 29 Փետրուար 2020



### Խմբագրական

## ԹՈՒՐԵՒՅՑ ԶԱԿԱՌԱԿՈՐԴՆԵՐԸ ԿԸ ՄԻԱՆԱՆ

Սուրիական տագնապը հրահրելու եւ Սուրիոյ ներքին հարցերուն միջամուխ ըլլալու առաջին իսկ օրերէն, Թուրքիոյ Նախագահին կը թուեր, թէ ուժեղ խաղաքարտերով պիտի կարենայ ազդեցիկ ուժ դառնալ Սուրիոյ մէջ: Ան յաւակնութիւն ունէր մինչեւ Դամասկոսի Օմայատ մզկիթ հասնելու եւ այնտեղ աղօթելու:

Այսօր կը թուի, թէ Թուրքիան ո՛չ կրնայ վստահիլ ՆԱԹՕ-ի միջամտութեան (ՆԱԹՕ-ն զինուորական աջակցութեան տրամադրութիւն չյայտնեց ու առանձին ձգեց Թուրքիան իր հակառակորդներուն դէմ, որովհետեւ քաջ գիտեր, որ զօրք ուղարկելու պարագային Ռուսիոյ դէմ ճակատումի պիտի ուղղուեր, իսկ պարտութիւնը անել կացութեան պիտի մատներ ՆԱԹՕ-ն), ո՛չ կրնայ վստահիլ ԱՄՆ-ին, որովհետեւ ԱՄՆ առանձնապէս չէ շահագրգռուած իր զինուորները դրկելու Սուրիա՝ Թուրքիոյ կողքին կռուելու, փաստօրէն զինուորական քանի մը գործողութեամբ ԱՄՆ փաստած է արդէն, որ սուրիական օդային տարածքը անպաշտպան չէ օտար ուժերու դիմաց, իսկ Սուրիոյ դաշնակից ուժերը միանալով զինուորական մեծ ուժ կրնան կազմել՝ ետ մղելու թրքական կամ այլ ուժերու թափանցումները: Առաւելագոյն պարագային ան գէնք ու զինամթերք, կամ զինուորական-մասնագիտական օժանդակութիւն պիտի հայթայթէ Թուրքիոյ՝ զանոնք ծառայեցնելու իր նպատակներուն:

Թուրքիա ստիպուեցաւ իր բանակի զինուորները Իտլիպ ուղարկել ու մեծաթիւ զոհեր տալով անել կացութեան մատուցաւ՝ յառաջացնելով Թուրքիոյ ժողովուրդին եւ ընդդիմութեան զայրոյթը:

Թուրքիոյ Նախագահը օսմանական ժամանակներու իր երազներու իրականացման համար կայուն յենարան չգտաւ:

Եթէ սուրիական պատերազմի Նախորդող տարիներուն Նախագահ Էրտողան կը ջանար ուղղուիլ դէպի Միջին Արեւելք եւ կը փորձէր տարածաշրջանին մէջ տիրող ներկայութիւն դառնալ ու շահիլ յատկապէս արաբ ժողովուրդին համակրանքը, անոր ծաւալապաշտ քաղաքականութեան ծալքերուն բացայայտումով, սուրիական պատերազմի առաջին իսկ օրերէն ի յայտ եկաւ, որ արաբական երկիրներուն մերձեցման նպատակը պարզապէս այդ երկիրներուն ու անոնց հարստութիւններուն տիրելն էր:


Սուրիական պատերազմի վերջին տարիներուն, յստակօրէն կը տեսնենք, որ Նախագահ Էրտողան ոչ միայն չյաջողեցաւ խաբել արաբ ժողովուրդն ու տիրել անոր, այլեւ անոր քաղաքականութեան իբրեւ արդիւնք տարածաշրջանին մէջ հակաթրքական առանցք մը սկսաւ ձեւաւորուիլ, յատկապէս Սուրիոյ, Եգիպտոսի, Լիպիոյ եւ Իրաքի նկատմամբ վերջին տարիներու Թուրքիոյ վարած քաղաքականութեան իբրեւ արդիւնք: Թուրքիոյ հակառակորդները սկսան աստիճանաբար միանալ:

Դամասկոսի մէջ Լիպիոյ, ԱՄԷ-ի եւ Պահրէնի դեսպանատուներու բացումը, Սուրիա-Իրաք յարաբերութիւններու բարելաւումը եւ Սուրիա-Ռուսիա-Իրան ռազմավարական գործակցութիւնը տարածաշրջանին մէջ հակաթրքական առանցքի մը ձեւաւորման, այլեւ աստիճանական ամրապնդման նախանշանները ցոյց կու տան:

Ահա թէ ինչո՞ւ Թուրքիոյ ընդդիմադիր շրջանակներ ճնշում կը բանեցնեն Թուրքիոյ Նախագահին վրայ՝ զերծ մնալու Սուրիոյ հետ սպառնական լեզուով խօսելու, Լիպիոյ մէջ սուրիացի ահաբեկիչներ օգտագործելու իր անհեռանկարային քաղաքականութենէն ու ինչայելու թուրք զինուորներուն կեանքը:

«Գ.»

Չորեքշաբթի, 4 Մարտ 2020-ին, ՍԱՆԱ հաղորդեց, որ ըստ Թուրքիոյ Պաշտպանութեան Նախարարութեան յայտարարութեան, Իտլիպի մէջ զինեալ ահաբեկչական խմբաւորումներուն լրացուցիչ օգնութիւն տրամադրելու ընթացքին երկու թուրք զինուորներ սպանուեցան, 6 ուրիշներ վիրաւորուեցան:



Սուրիոյ վարչապետ Իմատ Խամիս «Ընկերային Ծառայութեան, Ազգային Սնտուկի Չարգացման Ծրագիր» խորագիրը կրող ժողովի շրջագիծէն ներս լրագրողներու հետ ունեցած հարցազրոյցի մը ընթացքին յայտնեց, որ սուրիական կառավարութիւնը կարելի չէ նկատել օրինակելի, ոչ ալ վերջին տարիներու ամենէն յաջող կառավարութիւնը: Ան աւելցուց. «Մենք որպէս կառավարութիւն ջանք չխնայեցինք յաջող կազմ ըլլալու: Յաճախ Նոր ծրագիրներ կը մշակեինք, Նոր քայլեր կ'որոշեցինք տնտեսական տագնապը դիմագրաւելու: Կառավարութեան մեծագոյն իրագործումը եղաւ. պատերազմի ընթացքին ապահովել ժողովուրդին հիմնական կարիքները, հակառակ սահմանափակ, գրեթէ գոյութիւն չունեցող նիւթական մեր կարողութիւններուն»:



«Ուաթան» թերթի թղթակիցին համաձայն Խամիս երբեք չուրացաւ արձանագրուող սղաճը, յայտնելով, որ ընդհանուր սակագիներու կայուն պահպանումը դժուար է ներկայիս, սակայն քաղաքացիին հիմնական պետքերուն սակագիները կայուն են, այնպէս ինչպէս պատերազմէն առաջ էին: Խամիս շեշտեց, որ այս մտահոգութիւնները կառավարութեան ժողովներուն կ'արժանանան առաջնահերթութեան կարգով, որովհետեւ կառավարութիւնը կը զգայ ժողովուրդին տառապանքը: Ան եզրափակելով ըսաւ. «Չկայ կառավարութիւն մը, որ դիտումնաւոր կերպով ի վնաս իր քաղաքացիներուն սխալ որոշումներ կը գոյացնէ»:

Երեքշաբթի, 3 Մարտ 2020-ին, «Ուաթան» թերթը յայտնեց, որ Իտլիպի հարաւային բաժինին մէջ, սուրիական բանակը պարտութեան մատնեց թրքական բանակն ու անոր ենթակայ զինեալ ահաբեկչական խմբաւորումները, ձախողուց Էրտողանի դաւադրական ծրագիրները եւ վերստին ազատագրեց ռազմավարական դիրք գրաւող Սարաքէպ քաղաքը ահաբեկիչներուն կողմէ գրաւուած յայտարարուելէն 4 օր ետք:



Չինուորական աղբիւր մը «Ուաթան»-ի հաղորդեց, որ սուրիական բանակը յարձակում գործեց Սարաքէպի հարաւային Շեյխ Մանսուր, Թալ Մարտիխ գիւղերուն մէջ գտնուող զինեալ ահաբեկչական խմբաւորումներուն վրայ եւ յաջողեցաւ գիւղերը իր վերահիւսկողութեան տակ առնել:

Աղբիւրին համաձայն, սուրիական բանակը ազատագրեց Սարաքէպի Աֆէս ու Ճոպաս գիւղերը, ապահովելով Դամասկոս-Յալէպ միջազգային ճամբուն շրջակայքը: Բանակը իր վերահսկողութեան տակ առաւ Նաեւ Թար-Նապա աւանը, որ Զմէյնաս եւ Սարմին գիւղերուն կողքին թրքական եւ ահաբեկչական հաւատարմորդական խմբաւորումներու գլխաւոր խարխիսներէն կը համարուի:

Շաբաթ, 29 Փետրուար 2020-ին, ՍԱՆԱ հաղորդեց, որ շուրջ 60 սուրիացի տիկիններ իրենց մասնակցութիւնը բերին Յալէպի մէջ արդիւնաբերական արտադրութեան վաճառքի ցուցահանդեսին, որ տեղի ունեցած էր «Շահպա Յալպա» հիւրանոցէն ներս:

Յալէպի Արդիւնաբերական Պալատի քարտուղար Ռաաֆաթ Շամմաս յայտնած էր, որ ցուցահանդեսը առիթ ընծայեց սուրիացի գործարար տիկիններուն փաստելու իրենց ստեղծագործ ձիրքերն ու արտադրողական կարողութիւնները:



Իր կարգին, Յալէպի արդիւնաբերական պալատի գործարար տիկնանց յանձնարումքի Նախագահ Անի Մարկոսեան յայտնած էր, որ ցուցահանդեսին մասնակցութիւն բերող սուրիացի տիկինները իրենց ներդրումը պիտի բերեն երկրի տնտեսութեան բարելաւման:

Աստղագործով եւ խճանկարային պատկերներով իր մասնակցութիւնը բերած էր Նաեւ Թալիս Միկրոյեան-Ալեքսանեանը, որ իր կարգին յայտնած էր, որ ցուցահանդեսը առիթ կ'ընծայէ սեփական աշխատավայր չունեցող իւրաքանչիւր ստեղծագործ սուրիացի տիկնոջ՝ իր արտադրութիւնները ցուցադրելու:

ՍՕ Խաչի Շրջ. Վարչութեան անդամ Շոդիկ Շեհմէլեան-Տեր Պօղոսեանի համաձայն, ցուցահանդեսին նպատակն է սուրիացի տիկիններուն նեցուկ կանգնիլ, որպէսզի իրենց արտադրած ձեռնային աշխատանքները վաճառեն:



# Լուրեր Հայաշխարհին

## ՆԱԽԱԳԱՆ ՍԱՐԳՍԵԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՈՒՆԵՅԱԾ Է ՀՅԳ ԲԻՐՈՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉ ՅԱԿՈԲ ՏԵՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆԻՆ ՀԵՏ

Հանրապետության նախագահ Արմեն Սարգսյանի 3 Մարտին ընդունած է ՀՅԳ ԲԻՐՈՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉ ՅԱԿՈԲ ՏԵՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆԻՆ ՀԵՏ



Յակոբ Տեր Խաչատուրեանը Ներկայացուցած է ՀՅԳ Հայ Դատի յանձնախումբերու և գրասենյակներու՝ օրերս Երեւանի և Ստեփանակերտի մէջ տեղի ունեցած խորհրդածրոյցները:

Անդրադարձ կատարուած է նաեւ Հայոց Յեղասպանութեան 105-րդ տարելիցի և Սեւրի դաշնագրի 100-ամեակին նախապատրաստուող նախաձեռնութիւններուն:

Հանդիպումին խօսուած է նաեւ Հայաստանի քաղաքական իրավիճակին, համահայկական օրակարգի հարցերուն և ազգային տարբեր ծրագիրներուն շուրջ համագործակցելու մասին:

## ԴԱԻԹ ԻՇԽԱՆԵԱՆ. «ՄԵՆՔ ԱՐՉԱՆԻ ՄԵՋ ՈՐԻՆՔ ՄԵՐ ԿԱՅՐԻՆ ԸՆՏՐՈՒՄԱՆ ԳՈՒՄՍԸ Է՛ ՄԵՐ ԱՐՉԱՆԻ ՏԵՐԸ՝ ՊԵՏ Ե՛ ՈՐԻՆՔԱՆՔ ԱՐՉԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ ՄԵՋ»

ՀՅԳ Արցախի Կեդրոնական Կոմիտեի ներկայացուցիչ, Արցախի նախագահական թեկնածու Դաւիթ Իշխանեան՝ «Թերթ»-ին հետ ունեցած գրոյցին ընթացքին հաստատեց. «Մենք «գերօ» քաղաքական նշանակութիւն ունեցող կուսակցութիւն չենք Արցախի մէջ և, յատկապէս, Արցախեան հիմնահարցի հանգուցալուծման ուղիին մէջ ունինք լուրջ դերակատարութիւն: Ատոր կը կարծեմ, կը գիտակցին նաեւ Հայաստանի պաշտօնական շրջանակները»:

Պատասխանելով այն հարցումին, թէ արդեօք Դաշնակցութիւնը մտահոգ չէ՞, որ այս անգամ կրնայ դուրս մնալ Արցախի խորհրդարանէն, ինչպէս եղաւ Հայաստանի մէջ՝ նկատի առնելով նաեւ, որ Հայաստանի վարչապետը պարբերաբար քննադատութիւններ կ'ուղղէ ՀՅԳ-ին, Իշխանեան ըսաւ. «Մենք Արցախի մէջ ունինք մեր կայուն ընտրազանգուածը և, կը կարծեմ, մենք այս անգամ եւս մեր արժանի տեղը պետք է ունենանք Արցախի խորհրդարանին մէջ: Հայաստանեան գարգացումները հայաստանեան դաշտին մէջ են, Արցախեան գարգացումները՝ Արցախեան դաշտին մէջ»:



Դաւիթ Իշխանեան դիտել տուաւ, որ իբրեւ նախագահական թեկնածու, կը շարունակէ նաեւ հանդիպումները Արցախի տարբեր շրջաններու բնակչութեան հետ: Ան յիշեցուց, որ պաշտօնական քարոզարշաւի մեկնարկէն առաջ մտահոգութիւն յայտնած էին որոշ ուժերու կողմէ կանուխ մեկնարկած քարոզարշաւին վերաբերեալ, որուն պէտք է հետեւելին համապատասխան մարմինները՝ ընդգծելով, որ տարբեր ոլորտներու խնդիրներու լուծման վերաբերեալ առաջարկներ կը ներկայացուին:

«Արցախեան տագնապին կապուած ունինք մեր ընդհանուր սկզբունքը, ռազմավարութիւնը, Արցախի պետականութեան միջազգային ճանաչումով վերջանականօրէն մայր Հայաստանի հետ վերամիաւորումը», ըսաւ ան:

Ըստ Դաւիթ Իշխանեանի՝ կը ներկայացնեն նաեւ ընկերային-տնտեսական ծրագիրներ: Անդրադառնալով այն հարցումին՝ արդեօք Արցախի մէջ որոշ թեկնածուներ կաշառք կը բաժնէ՞ն, ինչպէս մամուլին մէջ հրապարակումները կ'ըսեն, Դաւիթ Իշխանեան յայտնեց. «Եթէ մամուլին հետեւինք, արդէն զինուորական գործողութիւններ կ'ընթանան, պատերազմէ: Սովորական քարոզարշաւ կ'ընթանայ»:

Թղթակիցը հարց տուաւ, որ այս օրերուն Արցախի մէջ կատարուած Հայ Դատի յանձնախումբերու խորհրդածրոյցը արդեօք քարոզարշաւի ծիրին մաս կը կազմէ՞, Իշխանեան պատասխանեց. «Բացարձակապէս՝ ոչ: Այդ խորհրդածրոյցը նախապէս ծրագրուած էր: Ըննարկուած են Արցախեան տագնապին, Յեղասպանութեան ճանաչման, ջախսախայրութեան իրաւունքներու մասին հարցեր»:

## ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ՎՐԱՍՏԱՆ ԿԱՏԱՐԱԾ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ԱԽՐՏԵՑԱՄ

«Երկիր».- Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան 3 Մարտին Վրաստան մեկնեցաւ և հանդիպումներ ունեցաւ Վրաստանի նախագահ Սալոմէ Չուրապիշվիլիի, վարչապետ Կիրիլ Կախարիայի, խորհրդարանի նախագահ Արչիլ Թալաքվաժէի, Թիֆլիսէն և Ջաւախքէն Վրաստանի պատրիարք Իլիա Բ.-ի և Վրաստանի հայ համայնքի ներկայացուցիչներուն հետ:



Նիկոլ Փաշինեան և Վրաստանի նախագահը քննարկեցին հայ-վրացական յարաբերութիւններու օրակարգային տարբեր հարցեր՝ շեշտելով կապերու ամրապնդման կարեւորութիւնը:

Վրաստանի վարչապետ Կիրիլ Կախարիայի հետ հանդիպումին ընթացքին վարչապետ Փաշինեան յայտնեց, որ հայ-վրացական յարաբերութիւններուն մէջ առկայ է չօգտագործուած մեծ ներուժ և երկկողմանի համաձայնութեամբ այն լիարժեքօրէն պէտք է օգտագործել:

Հայաստանի վարչապետը ողջունելի նկատեց Վրաստանի այն դիրքորոշումը, որ բոլոր տագնապները պէտք է լուծուին խաղաղ ուղիով:

Չրուցակիցները կարեւոր նկատեցին առևտրական-տնտեսական համագործակցութեան ընդլայնման վերաբերող քայլերը և այդ պարունակին մէջ անհրաժեշտ նկատեցին գործարար կապերու խորացման վերաբերող քայլերը:

Վարչապետ Նիկոլ Փաշինեան անջատ հանդիպումներ ունեցաւ նաեւ Վրաստանի խորհրդարանի նախագահ Արչիլ Թալաքվաժէի և համայն Վրաստանի պատրիարք Իլիա Բ.-ի հետ:

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան Վրաստանի հայ համայնքին հետ ևս ունեցաւ հանդիպում մը, որուն ընթացքին անդրադարձաւ Հայաստան-Վրաստան յարաբերութիւններուն, վիրահայերու հարցերուն, հայրենադարձութեան, Հայաստանի կառավարութեան տնտեսական, քաղաքային քաղաքականութեան, փտածութեան դէմ պայքարի ուղղութեամբ իրականացուող քայլերուն և հայութիւնը յուզող այլ հարցերու:

Վարչապետ Նիկոլ Փաշինեանի Վրաստան կատարած պաշտօնական այցելութիւնը իր աւարտին հասաւ Չորեքշաբթի, 4 Մարտին:

ՆԱԽԱՊԱՐԿՈՒԹՅԱՆ ԳԵՐԸ. Տ. ՄԱՍԻՍ Մ. ԵՊՍ. ՉՕՊՈՒԲԵԱՆԻ

Կազմակերպութեամբ ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ

Երոյթ կ'ունենայ

**Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅ**

Աշակերտական Երգչախումբը

Գեղարունասրահի ղեկավարութեամբ Տիկին Գայիանէ Սիմոնեան-Տերեանի

Դաշնամուրի ղեկավարութեամբ Տիկին Շողեր Օհանեան-Քաւրէճեանի

Կիրակի, 8 Մարտ 2020-ի երեկոյեան ժամը 6:00 -ին, «Գ. Եսայեան» սրահէն ներս, Սիպէլյանիէ - Նալչա:

Տոմսերը ապահովելու համար հեռաձայնել: 0955 606099 - 0933 857883



## ԲԵՆԻՄԻՆ ՊՉԱՔԹԵԱՆ՝ «ԱՌԻ»-Ի ԱՐՑԱԽԵԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒՄՆ ՄԱՍԻՆ. «ԱՅԴ ՇՐՋԱՆՆԵՐՈՎ ԱՄԲՈՂՋ ԵՐԿԻՐ ՄԸ ԿԸ ԿԵՐԱԿՐԵՆՔ»

Արցախը Հայաստանի Հանրապետության կապող եւ Արցախի ռազմավարական դարպաս հանդիսացող երկու կարեւոր օղակներու՝ հարաւ-արեւմտեան թեւի՝ Զաշաթաղի շրջանի, հիւսիսային եւ հիւսիսարեւմտեան թեւի՝ Շահումեանի շրջանի, վերաբնակեցման եւ զարգացման նպատակով արդէն երկար տարիներ աշխարհի տարբեր երկիրներէն գործարարներու ներգրաման միջոցով ազգանուէր ծրագիրներ կեանքի կը կոչէ ԱՌԻ՝ «Արցախ Ռուքս Ինվեսթմենթ» (Artsakh Roots Investment) ներդրումային ընկերութիւնը՝ գարկ տալով այս շրջաններու բնակարանաշինութեան, գիւղատնտեսութեան եւ անասնաբուծութեան զարգացման, ծնունդներու խթանման: ԱՌԻ՝ «Արցախ Ռուքս

կերպութիւններ ներկայացուցին Արցախի վերաբնակեցման եւ զարգացման ծրագիրները՝ գիւղի, կաթնամթերքի մշակման գործարաններ հիմնելու, գիւղատնտեսութիւնը զարգացնելու գծով: Լիբանան ստեղծուած «Արցախ Ֆոնտ»-ը եւս կը մասնակցէր խորհրդածողովին, մենք համոզուեցանք, որ Արցախի վերակառուցման, տնտեսութեան զարգացման նպատակով համար անհրաժեշտ է փոխշահաւետ ներդրումներ ապահովել: Գործարարներու փոքր խումբ մը հաւաքուեցաւ եւ որոշեցինք ներդրումներ ընել այնպիսի շրջաններու մէջ, ուր նպաստը ինքն կայուն զարգացման, աշխատատեղերու ստեղծման եւ եկամտաբեր ձեռնարկներու իրականացման: Արցախի իշխանութեան հետ հանդիպեցանք, քննարկեցինք, որոշուեցաւ Արցախի գիւղի եւ գիւղատնտեսութեան զարգացման հիմնադրամներուն մէջ գումարներ ներդնել, գիւղատնտեսութեան զարգացումը խթանելու նկատառումով, երկարաժամկետ, ցած տոկոսադրոյքով, առանց գրաւի վարկեր տրամադրելու գիւղացիներուն: Ներդրումը ըրինք, մէկ տարուան ընթացքին արդիւնքը տեսանելի էր, 250-300 ընտանիք կրցաւ վարկ վերցնել», Yerkir.am-ի հետ զրոյցի ընթացքին ըսաւ Բենիամին Պչաքթեան եւ համառօտ կերպով ներկայացուց իրականացուող ծրագիրները՝ կոչ ուղղելով ողջ աշխարհի հայ գործարարներուն միանալու իրենց եւ ազգանուէր ու փոխշահաւետ այս ծրագիրներու իրականացման համար ներդրումներ կատարելու:



Բենիամին Պչաքթեան (միջինում) հարցազրույցի ընթացքին քննարկումներ կատարելով Արցախի վերաբնակեցման եւ զարգացման ծրագիրները: Մտերմ Պչաքթեան (ձախառնում) եւ Գրիգոր Գրիգորյան (աջում):

Ինվեսթմենթ» ներդրումային ընկերութեան բաժնետէրերը պարբերաբար կ'այցելեն Արցախ՝ տեղւոյն վրայ ծանօթանալով կատարուած աշխատանքներուն, նախորդ տարիներու գործունէութեան արդիւնքներուն: Սփիւռքահայ գործարարները յաճախակի հանդիպումներ կ'ունենան Արցախի պետական այրերուն, երկրի նախագահին հետ, կը քննարկեն ծրագիրներն ու հեռանկարները: Ընկերութիւնը սկիզբէն ի վեր ստեղծուած է քանի մը լիբանանահայ գործարարներու մասնակցութեամբ, բայց այսօր ներդրողներուն թիւը հասած է շուրջ 200 անհատ գործարարի, որոնք կը ներկայացնեն Սուրիա, ԱՄԷ, Զուէյթ, Շուէտ, Ֆրանսան, Մեծն Բրիտանիա, Ռուսաստան, ԱՄՆ եւ Աւստրալիան: Նախաձեռնութեան վերջին միացողները 20 նոր ներդրողներ են Մելպորնէն եւ Սիտնիէն, որոնք ստանձնած են Զարվաճառի բարձրագիւղ, գեղատեսիլ տարածքի մը մէջ նոր՝ Սիտնի կոչուող թաղամասի կառուցման յանձնառութիւնը:

Ըստ պարոն Պչաքթեանի՝ ընկերութիւնը տասը տարուան ընթացքին Նոր Շահումեանի եւ Զաշաթաղի շրջաններուն ընդհանուր առմամբ շուրջ 7 միլիոն տոլարի ներդրում ըրած է գիւղատնտեսութեան եւ բնակարանաշինութեան ոլորտներուն մէջ: «Հազարաւոր հեքթարներ ցորեն եւ գարի կը ցանուին, իսկ անասուններուն գլխաքանակը կըրկնապատկուած է: Զաշաթաղի մէջ բնակչութեան 24 տոկոս աճ արձանագրուած է, եթէ համեմատենք Արցախի այլ շրջաններուն հետ, այս մեծ առաջընթաց է: Եթէ հաշուի առնենք որքան միս եւ ցորեն կը պահանջէ Հայաստանը կերակրելը, ապա պէտք է նշել, որ այդ շրջաններուն բնակչի նախնական նպաստաւոր պայմանները ճիշդ օգտագործելու պարագային, անոնք որք երկիր մը կը կերակրեն», յայտնեց ՀՀ Բիւրոյի անդամը:

«Նոր կեանքի կոչուող ծրագիրը ուղղուած է վերաբնակեցուող բնակավայրերուն մէջ մշտական բնակութիւն հաստատած ընտանիքներու կենսապահովման խնդիրները լուծելուն եւ ծնունդներու աճը խրախուսելուն: Ընտանիքի ծնած երեխաներուն պարագային մէկ կը տրամադրուի ընտանիքին: Ամէն տարի Արցախի կառավարութեան կողմէն կը ստանանք նորածին երեխաներու կըրկնաքանակը, տեղեկատուութիւնը, որ տուեալ ընտանիքի երրորդ երեխան է: Մեր մասնագէտները կը շրջին գիւղ առ գիւղ, համայնք առ համայնք, կը ստուգեն, թէ տուեալ նորածինը իսկապէս այդ տեղը կը բնակի եւ կը նուիրեն կյանքը: Արդէն 1550 կյանք կը բաժնած ենք, պայմանագիր կը ստորագրուի կողմ վաճառողին, կողմ ստացողին եւ մեր ներկայացուցիչին միջեւ, որ երեք տարի այդ կողմ պէտք է չմտորէ, չծախի եւ պէտք է լաւ խնամէ զայն: Ազատագրուած Շահումեանի, Զաշաթաղի շրջաններուն մէջ անասուններուն գլխաքանակը զգալիօրէն բարձրացուած ենք: Այս ծրագիրի առանցքային նպատակն է խրախուսել բազմազանակութիւնը, նպաստաւոր պայմաններ ստեղծել մարդը կենսամակարդակի բարձրացման համար», աւելցուց Բենիամին Պչաքթեան:

«Գոյք Արցախի դպրոցներուն համար» ծրագրի ծիրէն ներս լիբանանահայ աշակերտները խորհրդանշական գումարներ կը հաւաքեն եւ ամէն անգամ Արցախի որեւէ համայնքի դպրոցին համար սարքաւորումներ, համակարգիչներ կ'ուղարկեն կամ գրասեղաններ կ'ապահովեն:

Պարոն Պչաքթեանէն խնդրեցինք այս մասին եւս ներկայացնել. «Մենք ունինք ռազմադաստիարակական ուղղութեան ծրագիրներ եւս, ճամբարներ կը կազմակերպենք: Լիբանանէն աւարտական դասարանի աշակերտները կու գան, 15-20 օր կ'անցընեն զօրամասին մէջ, կ'ապրին գիւղերին կեանքով, Նոյն ծաշը կ'ունեն, մարմնամարզութեան կը հետեւին՝ յարաբերութիւն մշակելով իրենց տարեկից երիտասարդներուն հետ: Իսկ Կովստեան համայնքներուն մէջ կիներուն համար հետաքրքրական համագործակցութիւն կ'իրականացնենք: Նկատի առնելով այն փաստը, որ ձմրան ամիսներուն տեղի կիները զբաղմունք չունին, որոշեցինք անհրաժեշտ նիւթեր տրամադրել, որպէսզի անոնք սովորին ձեռագործները: Անոնք ձեռագործ աշխատանքները կը ծախուին Լիբանանի մէջ՝ վաճառքի գումարը ուղարկելով այդ կիներուն՝ լիբանանցի եւ արցախցի կիներուն միջեւ ձեւաւորելով բարիդրացիական յարաբերութիւններ», բացատրեց ՀՀ Բ. Ի անդամը: Հարցին, թէ արդեօք Լիբանանէն կամ Սուրիայէն ընտանիքներ ցանկութիւն կը յայտնեն Արցախ հաստատուելու, մեր գրուցակիցը պատասխանեց, որ դժբախտաբար՝ կենցաղի պայմաններու հսկայական տարբերութեան պատճառով ընկամէնը քանի մը ընտանիք Լիբանանէն ու Սուրիայէն եկած է Արցախ: Իրենք կ'օժանդակեն այսպիսի ընտանիքներուն, տուն կը տրամադրեն եւ վեց ամսուան համար ապրուստի գումար: ԱՌԻ՝ «Արցախ Ռուքս Ինվեսթմենթ» (Artsakh Roots Investment) ներդրումային

ընկերութեան գործարարներու խումբը յաճախ կ'այցելէ Աղաւնոյ գետի ափին կառուցուած Արիւան գիւղը, որովհետեւ գիւղի կառուցապատումը ԱՌԻ-ի ամենամեծ ներդրումային ծրագիրներէն մէկն է: «Արցախի մէջ մենք ձեռնամուխ եղանք բնակարանաշինութեան գործընթացին, որոշեցինք ընտրել ռազմավարական նշանակութիւն ունեցող համայնք մը, որ օրինակելի աւան կը հանդիսանայ: Մեզի տրամադրուեցաւ տարածք եւ Արիւանի մէջ արդէն կառուցուած է 50 տուն՝ տնամերձ հողամասերով: Արիւանի բնակելի տունները տրամադրուած են բազմազանակ ընտանիքներուն, բնակիչն մէկ աւելի քան քսան տարի ծառայած սպաներուն եւ այն բնակիչներուն, որոնք այդտեղ կ'ապրէին անմարդկային պայմաններու մէջ», գոհունակութեամբ յայտնեց պարոն Պչաքթեանը:

Ըստ Մեր գրուցակիցին՝ Զարվաճառի մէջ կառուցուող 15 բնակելի տունները պատրաստ պիտի ըլլան Մայիսին՝ ընկերային բոլոր յարմարութիւններով եւ ջերմամեկուսացմամբ: Վարչակազմի ղեկավարին հետ քննարկման արդիւնքով եկած են այն եզրակացութեան, որ նորակառոյց այս թաղամասին մէջ հարկաւոր է վերաբնակեցնել մասնագէտներ, գիւղատնտեսներ եւ ուսուցիչներ: Բենիամին Պչաքթեանի հաւաստիացմամբ՝ այս տունները ոչ մէկ ձեւով կը ծառայեն իբր ամառանոցներ, այնտեղ պէտք է ապրին բազմազանակ ընտանիքներ:

Հարցին, թէ Զարվաճառը վերադարձնելու մասին ժամանակի մամուլով շրջանառուող խօսակցութիւնները ձեռք չէին մտահոգեր, ՀՀ Բիւրոյի անդամ պատասխանեց. «Երբ առաջին անգամ այցելեցի Զարվաճառ՝ տպաւորուած էի եւ վստահ, որ սա հարուստ քաղաք մը եղած է՝ հաշուի առնելով փլատակ տուններու ցանկապատներուն հաստատութիւնը, տուններուն յարակից տարածքները, քաղաքի կերտնական փողոցը: Ամէն ինչ շատ տպաւորիչ էր, կը յիշեցնէր քաղաքին իւրայատկութիւնը: Եթէ ներդրումներ կատարուին, զարգացնենք այս շրջանը, անհնար կ'ըլլայ վերադարձը: Մենք պէտք է զարգացնենք եւ ամէն ճիշդ թափեցնք, որ այդ տարածքները պահպանենք»: Բենիամին Պչաքթեանը սփիւռքահայ գործարարներուն պարբերաբար կը պատմէ իրենց ծրագիրներուն եւ փորձառութեան մասին, լուսանկարներով կը ներկայացնէ կատարուած աշխատանքները, կը քաջալերէ ներդրումները Արցախի մէջ: «Կոչ կ'ուղղեմ աշխարհի տարբեր երկիրներու հայ գործարարներուն, որոնք կը փափաքին ազգանուէր ծառայութիւն մը մատուցել իրենց հայրենիքին, միանան մեզի՝ Արցախի վերաբնակեցման, վերաշինութեան համար փոխշահաւետ ներդրումներ կատարելով», զրոյցը եզրափակեց Բենիամին Պչաքթեան: ԱՌԻ՝ «Արցախ Ռուքս Ինվեսթմենթ» (Artsakh Roots Investment) հիմնադրամի գործունէութեան բոլորը կրնան ծանօթանալ ընկերութեան պաշտօնական էջին միջոցով:

Վարդինէ Իսահակեան



## ՅՈՒՆԱՆԱՆԻՄ ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ԶՕՐԱՎԱՐԱՑ

Հովանավորությամբ Հայկաի երեք հոգեւոր պետերուն, Հինգշաբթի, 20 Փետրուար, 2020-ին երեկոյեան ժամը 6:30-ին, Նոր Գիւղի հայ կաթողիկէ Սուրբ Երրորդութիւն

Որդուն» քերթուածը ասմունքելով Սօրիս Թօփալաքեան վեր առաւ հայ լեզուին դերը սերունդներու հայապահպանման գործին մէջ: Սուրիոյ Հայ Աւետարանական



«Չուարթնոց» եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ յուշահանդէս նուիրուած Ս. Վարդանանց զօրավարներուն, «Մահ ոչ իմիացեալ մահէ, մահ իմացեալ՝ անմահութիւն» կարգախօսով:

Յուշահանդէսին ներկայ էին Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդի



Ներկայացուցիչ Հոգ. Տէր Մանուկ Աբղ. Պարիխանեան, Բերիոյ Կաթողիկէ Առաջնորդի ներկայացուցիչ Գերայ. Հայկ. Վարդ. Մակարեան, Սուրիոյ Հայ Աւետարանական Համայնքի ներկայացուցիչ պատուելի Սիմոն Տէր Սահակեան, ՀՀ Հայկաի գլխաւոր հիւպատոս Արմէն Սարգիսեան, ՀՀ Մարդասիրական Խումբի հիւպատոսութեան ներկայացուցիչ, գնդապետ Արտակի Տօնոյեան, ՀԱՄԻ-ի Կենդրոնական Վարչութեան Սուրիոյ ներկայացուցիչ Մանուկ Զեօշկերեան, հոգեւոր հայրեր, առաքինազարդ քոյրեր եւ հալէպահայ ազգային, մշակութային, կրթական, բարեսիրական, մարզական, եկեղեցական միութիւններու ներկայացուցիչներ:

Յայտագիրը սկսաւ «Նորահրաշ» շարականով, Ալեմշահ երգչախումբին երգեցողութեամբ:

Բացման խօսքով հանդէս եկաւ Սիւզան Տատաղեան: Ան ըսաւ որ ժողովուրդները կ'ապրին ու կը գոյատեւեն երբ պայքարելու յանդգնութիւն կ'ունենան: Աւարայրի ճակատամարտը իր կրօնական նպատակներուն կողքին ունէր նաեւ ազգային նպատակ, որն էր պահպանել մեր ինքնութիւնն ու մշակութային արժէքները:

Ս. Կապուտիկեանի «Խօսք Իմ

Համայնքի Համայնքապետ Վերապատուելի Յարութիւն Սելիմեանի խօսքը ընթերցեց պատուելի Սիմոն Տէր Սահակեան ու ըսաւ. «Պարսկին պարտադրել ուզածը կրօնափոխութիւնն էր, պարսկական թագաւորութիւնն ստեղծելու Յազկերտին պահանջքն էր, որուն իրականացումով հայերը իրենց կրօնը պիտի փոխէին եւ միանային այլ ազգերու՝ պարսկական կայսրութեան ուժեղացման համար: Այսօր Վարդանանց յիշատակին առջեւ կը խոնարհինք եւ կը շեշտենք, որ այլքան այժմեական է Աւարայրի հերոսական պատգամը՝ մէկ ճակատի վրայ



պայքարելու օտար բարքերուն դէմ»:

Գեղարուեստական յայտագիրով Սելա Չաքարեան ջութակի քաղցրահունչ նուագով հնչեցուց «Լռեց Ամպեր», «Պլպուլն Աւարայրի» ստեղծագործութիւնները:

Օրուան խորհուրդը տուաւ Արժ. Տէր Կոմիտաս Քինյ. Տատաղեան:

«Այսօր ընդդէմ գրադաշտութեան, հաւատքի ուրացման պողոտայի յիշատակունքն է: Այսօր հայութեան լինելութեան հերոսամարտի յիշատակին տօնն է: Այսօր գիտակից մահուան, վասն կրօնքի եւ հայրենեաց, վասն պատուի եւ ազատութեան գոհուող մարտիկներուն յիշատակի ոգեկոչումին օրն է: Հայ ժողովուրդը իր ամբողջ պատմութեան ընթացքին ապրեցաւ Աւարայրի մշտաճանաչ ռազմադաշտը վերածելով փարոսի, որ լուսաւորեց մեր պատմութեան ամենամութ բաւիղները, դարեր ամբողջ մեր ազգա-

յին հաւաքականութեան տալով ինքնիշխանութեան եւ ազատ ապրելու տենչը: Այսպէս է որ ապրեցաւ հայը լեռները շարժող իր անսասան հաւատքով ու կամքով, Սարդարապատի եւ Արցախի մէջ յաղթանակը արձանագրելով»:

կի, երգեհոնի ընկերակցութեամբ Ռաֆֆի Պալեանի, յաջորդաբար ներկայացնելով «Թաղումն Բաջորդոյն», «ՌՎ Հայկազուն», «Թէ Հայրենեաց» եւ «Գողթնի Քնարք» երգերը: Փակման խօսքը արտասանեց



Իր խօսքին աւարտին, ան կոչ ուղղեց ժողովուրդին ըսելով. «Յանուն մեր ապագային, Վարդանանց աննկուն կամքը թող համակէ մեր սրտերը, որպէսզի երբեք չշեղինք անոնց գծած ուղիէն, մեր գոյատեւման միակ գրաւակաւեն»:

Գերայ. Հայկ. Վրդ. Մակարեան: Ան յայտնեց. «Հայրենիքի եւ կրօնքի համար մղուող պատերազմը սուրբ է, Վարդանանց պատերազմը սուրբ պատերազմ էր, որովհետեւ անոր շնորհիւ մենք շարունակեցինք գո-



Բանախօսութեան յաջորդեց ասմունք մը՝ ժագ Յակոբեանի «Մենք»ը, զոր տպաւորիչ առոգանութեամբ հրամցուցին Լոռի Մաթոսեան եւ Կարօ Մէլիանաճեան:

Հոգեւ. Տէր Մանուկ Աբղեղ. Պարիխանեան փոխանցեց Բերիոյ Հայոց Թեմի առաջնորդ Գերշ. Տէր Մասիս Սրբ. Եպս. Չօպուեանի ջերմ ողջոյնները ըսելով. «Վարդանանցի նահատակ գիտարարները կը նմանին մովսին: Մոմը լոյս կու տայ, սենեակին խաւարը փառատելու համար կը հալի: Մեր գիտարարներն ալ ազգին եւ կրօնքին համար իրենց կեանքը գոհեցին, որպէսզի մենք շարունակենք մեր հաւատքին լոյսով ապրիլ: Վարդանի ոգիով մեր գաւաակները դաստիարակեցինք, որպէսզի անոնք ամրապնդեն իրենց հաւատքը եւ պահպանեն ինքնութիւնը»:

յատնել ու ծաղկիլ որպէս ազգ»:

Աւարտին փոխանցեց Բերիոյ Թեմի Կաթողիկէ հայոց առաջնորդի Արիի. Տէր. Պետրոս Արք. Միրիաթեանի շնորհաւորանքը եւ շնորհակալութիւնը բոլոր անոնց, որոնք սոյն ձեռնարկը յաջողութեամբ պատկերով համար աշխատանք չխնայեցին, յատկապէս օրուան բանախօսին՝ Արժ. Տ. Կոմիտաս Քինյ. Տատաղեանին, երգչախումբի անդամներուն, ղեկավարին եւ յայտագրի բոլոր մասնակիցներուն:

Յուշահանդէսը վերջ գտաւ հայ երեք հոգեւոր պետերու ներկայացուցիչներուն «Պահպանիչ» աղօթքով:

ժիրայր Կարապետեան

**ՀՈԳԵՀԱՆԳԻՍ**

Մարտի 4-ին ընտանիքը շնորհակալութիւն կը յայտնէ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեանին, գաղափարակից ընկերներու մեծ ընտանիքին, Ազգ. իշխանութեան, հոգեւորականաց դասուն, Համազգայինի Սուրիոյ Երջ. Վարչութեան, Ազգ. Զարէն Եփփէ Ծեմարանի Խնամակալութեան ու Տնօրէնութեան եւ բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ կամ հեռաձայնով մասնակից դարձան իրենց հարազատին՝

**ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ՄԱՐԳԻՍ ՄԱՐՈՒԹԵԱՆԻ**

մահուան սուգին:

Հանգուցեալի քառասունքի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 15 Մարտ 2020-ին, յաւարտ Ս. եւ Անմահ Պատարագի, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, Վիլլաներ - Հայէպ:

Յետ հոգեհանգստեան արարողութեան ցաւակցութիւնները պիտի ընդունուին Կրթասիրաց Մշակութային Միութեան սրահին ներս:





## «ԳԱՆՁԱՍԱՐ»Ի «ԿԿՈՒ»Ն ԵՒ ՍՈՆԱՆ ՀԱՅ ԱՇԽԱՏԱԿՆԵՐԸ ԾԱՆՕԹԱՑՈՒՑԻՆ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԹԵՐԹԻՆ

Կազմակերպութեամբ «Գանձասար» շաբաթաթերթի խմբագրակազմին եւ վարչութեան, Ուրբաթ, 28 Փետրուար 2020-ին, ԱՄԺ Տան «Անի» ճաշարանէն ներս տեղի ունեցաւ հայկական վարժարաններու աշակերտներուն յատուկ ձեռնարկ մը: Ձեռնարկին նպատակը աշակերտները «Գանձասար» շաբաթաթերթի «Կկու» մանկապատանեկան ներդրիկի նիւթերուն հարող դարձնելն էր:

Հալէպի հայկական վարժարաններու աւելի քան 200 աշակերտներ ուրախութեամբ ներկայացան: Ձեռնարկը յատկացուած էր հայկական վարժարաններու 4-րդ, 5-րդ եւ 6-րդ կարգերու աշակերտներուն: Այդուհանդերձ առաջին, երկրորդ եւ երրորդ կարգերէն ալ փոքրիկներ ժամանեցին սրահ եւ խնդրեցին մասնակցիլ:

-Օրիորդ, հաճիք զիս ալ ներս

րելորութեան:

Ան յայտնեց, որ «Կկու»ն 25 տարիէ ի վեր լոյս կը տեսնէ ման-



կապատանեկան նիւթերով եւ խաղերով, ընթերցասեր փոքրիկներուն օգտակար գիտելիքներ տալու:

Այնուհետեւ աշակերտներ Մարի Ռոզ Բեռնարտեան, Մայք Գեւորեան, Նանոր Լախոյեան եւ Բրիստ



առք, չեմ աղմկեր, խելօք կը նստիմ ու կը հետեւիմ յայտագիրին:

«Կկու»ն ինչպէ՛ս կրնար ջնդու-նիլ իր սիրելի ճագուկները: Բոլորը սրտբացօրէն ընդունեց ու հաճելի ժամ մը կարգուեց անոնց:

«Անի» ճաշարանը մանկապատանեկան սրահի մը վերածուած էր, ուր շաբթ կազմած այթոռները լե-

Տեմիրճեան պատմեցին Յ. Թումանեանի հեքիաթներէն «Անյաղթ Աքլորը» եւ «Ոսկի Կարասը»:

Յայտագիրին իրենց մասնակցութիւնը բերին նաեւ հանրածանօթ երգչուհի Սոնան եւ իր խումբը: Աշակերտները մեծ խանդավառութեամբ դիմաւորեցին Սոնան, որ երգելով ու պարելով թնդա-



ցուած էին գուարթ աշակերտներով:

Յայտագիրը բաց յայտարարուեցաւ ժամը 5:00-ին: «Կկու»ի խմբագիր Ռիթա Կարեան-Տիբախեան բարի գալուստ մաղթեց աշակերտներուն եւ հաճելի ու հետաքրքրական ձեւով ներկայացուց «Կկու»ի բովանդակութիւնը, անդրադառնալով հայերէն թերթ ընթերցելու կա-

ցուց սրահը: Անոր սիրուն տեսքն ու հաճելի երգեցողութիւնը գրաւեցին փոքրիկներուն ուշադրութիւնը: Բոլորը միասին կ'երգէին ու կը պարէին:

Սոնան հայերէն թերթ կարդալու կարելորութեան անդրադարձաւ, հարցումներ ուղղեց փոքրիկներուն թերթին մասին, ըսաւ, որ

## Թուրքիոյ նուրջ

### ՍՈՒՐԻՈՅ ԱՐՏԱԲԵՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ. «ԱՆԱԲԵԿՉՈՒԹԵԱՆ ԶՕՐԱԿՅՈՒԹԻՒՆԸ ԹՈՒՐԷՒՈՅ ԵՒ ԱՐԵՄՈՒՏԵՒ ՀԱՍՏԱՏՈՒՆ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԴԱՐՁԱՆ՝ Ի ԽՆԴԻՐ ԻՐԵՆՅՆ ԵՆԵՂ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՒՆ»

Սուրիոյ Արտաքին Գործոց Նախարարութենէն պատասխանատու աղբիւր մը յայտնեց, որ «Վերջին շրջանին, Թուրքիոյ եւ արեւմուտքի կիրարկած ապատեղեկատուական արշաւը Սուրիոյ դէմ փաստեց, որ անոնք, Թուրքիոյ գլխաւորութեամբ, տարիներէ ի վեր որքան զօրավիճ կը կանգնէին ու կը շարունակէն կանգնիլ ահաբեկչութեան, զայն համարելով իրենց դաւադիր ծրագիրներուն երաշխիքը՝ Սուրիոյ ինքնիշխանութիւնն ու կայունութիւնը քայքայելու եւ Սուրիոյ ժողովուրդին կայուն ապագայի ձգտումները խափանելու համար:



Աղբիւրը յայտնեց, որ Թուրքիան Սարաքէպի առանցքին սուրիական բաւակի գոհերուն թիւը ուռճացնելով փաստեց ահաբեկչներուն հետ իր գործակցութիւնն ու ցոյց տուաւ անոնց պարտուողական տրամադրութիւնը բարձրացնելու իր ապարդիւն ճիգերը, ինչպէս նաեւ Սուրիոյ համաձայնութիւնները չյարգելու իր կրկնուող օրինազանցութիւնը»:

Աղբիւրը աւելցնելով ըսաւ, որ սուրիական բանակի յաղթանակները, Հալէպ-Դամասկոս միջազգային ճամբուն եւ օդակայանին բացումը, Հալէպի, Համայի եւ Իտլիպի նահանգներու աւելի քան 30 գիւղերուն ազատագրումը եւ այլն, խուճապի մատնած է Թուրքիան ու արեւմուտքը, զիրենք մղելով ահաբեկչութեան բացայայտ զօրակցութեան, շրջանցելով միջազգային օրէնքներն ու մարդկային իրաւունքները:

Աղբիւրը եզրափակելով յայտնեց, որ սուրիական բանակը վճռած է պայքարիլ օտար ուժերուն եւ ահաբեկչութեան դէմ, թոյլ չտալով որ անոնք Սուրիոյ ժողովուրդը ենթակայ դարձնեն նման դաւադրութիւններու:

թերթ կարդալով անսխալ գրելու եւ արտայայտուելու վարժութիւն կ'ունենան, քաջալերեց նաեւ որ նամակներ յղեն «Կկու»ին: Ներկայ 200 աշակերտներուն համար հաճելի անակնկալ էր երգչուհի Սոնային հրաւերով «Կկու»ին ժամանումը: Ան դեղին փետուրներ կրող իր հագուստով, թովալով ներս մտաւ ու որպէս աշակերտներուն մտերիմ բարեկամը երգեց ու պարեց անոնց հետ, ապա «Կկու»ի տարեկան բացառիկ գունագարդ գրքոյկէն օրինակներ նուիրեց աշակերտներուն:

պատկերներ, որոնց հիման վրայ աշակերտները պատմութիւն պիտի շարադրէին տեղւոյն վրայ:



Այլ երկու խաղերու եւս մասնակցելով աշակերտները սկսան մրցիլ իրարու հետ, նուէրներ ստացան

Այլ երկու խաղերու եւս մասնակցելով աշակերտները սկսան մրցիլ իրարու հետ, նուէրներ ստացան



«Կկու» ներդրիկի ձեւաւորող, երկրաչափ Ռաֆֆի Բեշիշեան հաճելի խաղի մը իրաւիւրեց փոքրիկները: Ան պատրաստած էր գունաւոր

ու խոստացան «Կկու»ին մշտական բարեկամները դառնալ ու ծանօթացնել զայն իրենց ընկերներուն: **Մարէն Պապեան**



ԱԻՕ ԳԱԹՐԾԵԱՆ. «ՔՐԻՍՏԱՓՈՐ» ԳՐԱԴԱՐԱՆԸ ՄԵԶԻ ՆԱՄԱՐ ԳԱՆՁԱՐԱՆ Է, ՄՏՔԻ ՇՏԵՄԱՐԱՆ, ՆՈԳԵՂԵՆՈՒԹԵԱՆ ՈՒ ՅԱՐԱՏԵՒՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ»

Հաւաքուած ենք «Քրիստափոր» գրադարանի հիմնադրութեան 100-ամեակին տօնակատարութեան առիթով, խօսելու եւ մտածելու մեծածաւալ կարելութիւններ կայացնող լոյսի, գիտութեան եւ իմացութեան հորիզոններ բացող, մէկ խօսքով գարգացման աղբիւր հանդիսացող կեդրոնին մասին: Բայց մանաւանդ՝ կարելի եղածին չափ արդար եւ պարզ մօտեցումով անդրադառնալու տյն հաստատութեան ծաւալած աշխատանքին առանցքը հանդիսացող մեծարժէք «Քրիստափոր» գրադարանի ներկայութեան անհրաժեշտութեան մեր ամօրեայ կեանքին ներս:

«Քրիստափոր» գրադարանի 100 տարուան բեղուն ծառայութեան մասին հանգամանօրէն խօսիլը լուրջ եւ պատասխանատու աշխատանք է. բան մը, որուն յաւակնութիւնը չունիմ երբեք, որովհետեւ որքան ներկայացնենք, վստահ որ պակաս պիտի մնայ անոր լիիրաւ արժէքին ամբողջական պատկերը:

Այսօրուան խօսքը կը վերաբերի գրադարանի ծառայողական աշխատանքի կարելութեան գնահատման եւ բացատրութեան՝ առաջնորդելով մտաւորականի եւ բանասերի տեսութիւններով: Այլ խօսքով, 100-ամեակի տօնակատարութիւնը առիթ մըն է միասնաբար խորհրդածելու, թէ նման հանրային գրադարանի մը գործունեութեան ընդմէջէն մեզի ներկայացող եւ մեր ամօրեայ ընկերակիցը դառնալու ձգտող «Քրիստափոր» գրադարանը ինչպիսի՞ դրական եւ բարերար ազդեցութիւն կրցած է ունենալ հայ պատանիին ու երիտասարդին, գիրգրականութեան սիրահարուած ընթերցողին, ուսումնասիրողին, հետազօտողին ու ազգային, գրական, հոգեկան-ընկերային ու գաղափարական առողջ կազմաւորման եւ անհատական թէ հաւաքական ինքնութեան պահպանման վրայ:

Առաջին հերթին, անդրադառնալով ընդհանրապէս գիրքին ունեցած անփոխարինելի դերին՝ մարդ անհատի կազմաւորման գործընթացին մէջ, իւրաքանչիւր անհատի կեանքին տարբեր փուլերուն:

Գիրքը գրական-գեղարուեստական, հասարակական-քաղաքական, գիտական կամ այլ բովանդակութեամբ ստեղծագործութիւն մըն է: Գիրքը ե՛ւ դիւրակիր նիւթական առարկայ է, ե՛ւ աննիւթեղէնի կամ մտաւորի մարմնաւորումը, որուն նիւթական արտայայտութիւնը գրաւոր նշաններն են, տողերը կամ ալ երկչափ գանձան միջոցներ:

Սկիզբէն իվեր գիրքը ընկալուած է, իբրեւ մտաւոր գործունեութեան արդիւնք, մեծածաւալ երկ, որուն ստեղծումը կը պահանջէ ժամանակի զգալի ներդրում եւ նոյնքան ալ (թէպէտ ոչ այնքան մեծ) ժամանակ ընթերցելու համար:

Գիրքը հիմնական տարրերն մէկն է մարդոց կեանքին մէջ, քանի որ ան կ'օգնէ գարգացնել միտքը, հոգին եւ մշակոյթը:

Այս մեկնակետէն ելլելով է, որ 19 Փետրուար 2009-ին՝ Յովհաննէս Թումանեանի ծննդեան 140-ամեակին օրը, Հայաստանի Գրողներու Միութիւնը, Թումանեանի տուն-թանգարանը, Հայաստանի ազգային գրադարանը, «Գիրք» հիմնադրամը, Հայաստանի մշակոյթի, կրթութեան եւ գիտութեան նախարարութիւնները յայտարարած են «Գիրք Նուիրելու Օր»: Այս նախաձեռնութիւնը, բնականաբար գիրքի հանդէպ հասարակական ուշադրութիւնը սեւեռելու շարժում է: Եւ այսպիսով 2009-ը թուականէն իվեր, իւրաքանչիւր Փետրուար 19-ին, կ'իրագործուի եւ հետզհետէ կը տարածուի «Գիրք Նուիրելու Օր»:

Անյագ ընթերցողին կամ գիրքեր հաւաքողին կ'ընեն գրքասեր կամ գրքամոլ: Խանութքը, ուրկէ կը գնեն գիրքեր, կը կոչուի գրախանութ կամ գրատուն, թէպէտ գիրքերը կը վաճառուին նաեւ գանձան այլ վայրերու մէջ: Գիրքեր կարելի է վերցնել նաեւ գրադարաններէն: Գրադարանները՝ որպէս գրաւոր յուշարձաններու հասարակական պահոցներ, առաջացած են հին ժամանակներէն: Զ.ա. 7-րդ դարու կիսուն Նիսուէյի մէջ, ասորական թագաւոր Աշուրպանիբալի պալատին կից եղած է կաւէ աղիւսներու մեծ հաւաքածոյ:

Հին Հռոմի մէջ Զ.ա. Ա. դարէն ստեղծուած են հանրային գրադարաններ՝ տաճարներուն կից:

Վերածնունդի դարաշրջանին մէջ (15-16-րդ դարեր) մշակոյթի ընդհանուր զարգացման եւ յատկապէս տպագրութեան եւ գիւտի կապակցութեամբ գրադարաններու թիւը մեծցաւ, 17-18 դարերուն բազմաթիւ երկիրներուն մէջ բացուեցան գրադարաններ, որոնք հետագային ստացան համազգային, քանի մը հատը նաեւ՝ համաշխարհային նշանակութիւն:

Հանրային գրադարաններու կազմակերպումը սկսած է 19-րդ դարու 2-րդ կեսէն:

Հայաստանի գրադարանները բազմադարեան պատմութիւն ունին: Միջնադարեան աղբիւրներուն մէջ անոնք կոչուած են գրատուն, գրանոց, արկեղք գրոց, գանձատուն, մատենադարան, դիւան, երբեմն ալ՝ նշխարանոց, նշխարախոյ: Եղած են վանքերուն կից, երբեմն ալ առանձին այլ վայրերու մէջ:

Հայ գիրքի կարելուր կեդրոններն եղած է նաեւ Տաթևի վանքի

(9 դար), Անիի արքայական (ԺԱ դ.) գրադարանները: Յիշատակութիւններ կան Կարսի արքայական, Հռոմոս վանքի գրադարանի մասին: Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանի հիմքը կազմող Էջմիածնի ձեռագրատունը հիմնուած է 5-րդ դարուն մէջ: Նշա-



նաւոր եղած են նաեւ Գետիկի վանքի, Գլածորի, Գեղարդի, Սաղմոսաւանքի, Արցախի, Կիլիկիոյ, Երզնկայի եւ Վասպուրականի գրադարանները:

1902 թուականին Երեւանի մէջ բացուած է հասարակական գրադարան-ընթերցարան, հետագային ստեղծուած են մասնաւոր գրադարաններ: 1913 թուականին Հայաստանի մէջ կար 13 գրադարան՝ 9 հազար վերնագիր գիրքով:

1921 թուականին կազմակերպուեցաւ Երեւանի համալսարանի գրադարանը: 1925 թուականին Հայաստանի մէջ կար 500 գրադարան: 1923 թուականէն կը գործէ Խնկոյ Ապեր անուան մանկական գրադարանը: 1935 թուականին հիմնուեցաւ Երեւանի քաղաքային գրադարանը: 1946 թուականին Հայաստանի մէջ կար 1125 գրադարան: Ստեղծուեցաւ գանձանային, հանրապետական, գիտական, մանկական, արիմիութենական, դպրոցական գրադարաններու հարուստ ցանց՝ միլիոնավոր գիրքերու հատորներ եւ փաստաթուղթեր: 1975 թուականին Սովետական Հայաստանի (ՀԽՍՀ) մէջ կար բոլոր տեսակի մօտ 3300 գրադարան:

Սփիւռքի մէջ կը գործեն հարիւրաւոր հայկական գրադարաններ, որոնցմէ նշանաւոր են Երուսաղէմի ձեռագրատունը, Վենետիկի եւ Վիեննայի Մխիթարեան մատենադարանները, Փարիզի Նուպարեան մատենադարանը եւ ուրիշներ:

Գրադարանի նշանակութեան մասին, այստեղ նպատակայարմար է մէջբերել Սենեգայի իմաստուն խօսքերը, ըստ որուն. «Ամէն մէկ գրադարան կը փակէ բանտի դուռ մը», ըսել է թէ՛ հասարակութիւնը կը հարստանայ համամարդկային արժեքները կրող եւ մէկ անձով, այսինքն՝ կը բազմանա քարոյականութեան բանակի շարքերը:

Հալեպի մէջ գործող «Քրիստա-

փոր» գրադարանի կենսագրութեան մասին խօսելով պէտք է անդրադառնալ նախ անոր անուանումին: «Քրիստափոր» անուանումը երբեք պատահական չէ եւ իր մէջ կ'ամփոփէ գաղափարական խորունկ իմաստներ: Գրադարանի անունը տրուած է ի յիշատակ հայ հասարակական-քաղաքական գործիչ, Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն կուսակցութեան հիմնադիրներէն Քրիստափոր Միքայէլեանի անունով:

Հետեւաբար, այսօր՝ 1 Մարտին, պատահական չէ նաեւ, որ կը տօնակատարենք գրադարանի հիմնադրութեան 100-ամեակը, քանի որ այսօր Քրիստափոր Միքայէլեանի նահատակութեան օրն է, որուն 115-ամեակն է այս տարի: Թեւ տարբեր աղբիւրներու մէջ 1 Մարտի փոխարէն տարբեր թուականներ արձանագրուած են:

Առ այդ, գրադարանի անուանակոչումը ինքնին իր մէջ մեծ խորհուրդ կը պարունակէ, սեր՝ հանդէպ ուսումին, մշակոյթին, ազգին, սեր՝ հանդէպ միտքի, գաղափարի, յեղափոխութեան, անհատականութեան, լուսաւորման, եւ վերջապէս, սեր՝ հանդէպ Հայ Դատի իրաւունքներու պաշտպանման:

Արդարեւ, «Քրիստափոր» գրադարանը հիմնուած է 1919-ին, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան օրուան պատկան մարմնի որոշումով, գործելով Ժողովրդի շրջանին մէջ 17 գիրքերով:

«Քրիստափոր» գրադարանի հիմնադրութեան մասին լաւագոյն վկայութիւնը մեզի հասած է Գեորգ Պարսումեանի «Պատմութիւն Այնթապի ՀՀ Դաշնակցութեան, 1898-1922» (Հալեպ, 1957 թ.) գիրքին, էջ 333-ին մէջ, ուր Գրիգոր Էքմէքճեանի պատումէն կը տեղեկանանք, որ Այնթապի Դաշնակցական «Քրիստափոր» գրադարանը վերապրեցնելու նպատակով Հալեպի գրադարանին անունը տրուած է «Քրիստափոր»:

Էքմէքճեան, նոյն յօդուածին մէջ կը հաստատէ, որ 1927 թուականին «Քրիստափոր» գրադարանին միացուեցաւ Հալեպի «Հայ Երկսէն Երիտասարդաց Միութեան» եւ «Պատանեկան Միութեան» («Միքայէլ Վարանդեան» Ա.Գ.) գրադարանները, ուր «Քրիստափոր» գրադարան ընդհանուր անուան տակ եւ շուրջ 2000 գիրքերով ծառայողական իր աշխատանքը պիտի շարունակէր:

Անոր դերը եղած է տպագիր գիրքերու հաւաքումը, պահպանումը, գիրքի քարոզչութիւնը, ընթերցողներուն գիրք սպասարկելը, ինչպէս նաեւ տեղեկութիւններու մատենագիտական աշխատանքը:

Այս առումով «Քրիստափոր» գրադարանի դերակատարութիւնը հիմնադրութեան առաջին տարիներէն



## Տ. ԵԶՆԻԿ ԲԶՆԱՆԱՅ ԶՂՁԱՆԵԱՆԻՆ ՆԱԲԱՏՔԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ



Խորեն Զինյ. Պերթիզյան

Երբեք չէր նախատեսուած յանկարծակի մեկնումը: Ոչ ոք կրնար պատկերացնել անժամանակ վախճանումը: Անսակարկ նուիրումով եղար ուխտապահ: Բահանայի վարկը բարձր պահեցիր, կոչումի գիտակցությամբ ծառայեցիր, հեզութեամբ Աստուծոյ խօսքը սերմանեցիր եւ մեր աղօթաբոյր շարական-



ները տիրական ճայնովդ մեկնաբանեցիր: Խաղաղասեր խառնուածքով ապրեցար: Ի վերուստ եկեղեցական ըլլալու շնորհը ստացար եւ այդ աստուածատուր պարգեւին նկատմամբ անքակտելի կապուածութիւն ունեցար: Անսպառ եռանդդ ուշագրաւ էր: Յատկութիւն մը, որ մնաց կեանքդ անբաժան:

Սիրելի՛ ընթերցող, կարելի չէ նկարագրել Տ. Եզնիկ Բահանայ Չղջանեանը առանց անդրադառնալու անոր վարքագիծին եւ վաստակին: Արդարեւ, պատահական որ եւէ մարդ բնականաբար կ'ունենայ կենսագրական տուեալներ, որոնց մէջ անձնական կեանքն է նկատելին: Իսկ առաջինի եւ ծառայասեր մարդը, կենսագրականն է անդին, սովորականէն հեռու, ժամանակաւորէն վեր, կ'ունենայ վկայութիւն մը, որ անթաղելի արժէք է: Միթէ այդ չէ՞ր Քրիստոսի առաքելներուն սրբանուէր առաքելութիւնը, երբ մեր Տէրը անոնց պատուիրեց ըսելով՝ «Իմ վկաներս պիտի ըլլաք» (Գործ 1.8): Այո, վկայ սիրոյ, սրբութեան, յաղթանակի եւ յարութեան. այսինքն՝ վկայ անթաղելի ճշմարտութիւններու, որոնք տարածքի եւ ժամանակի մէջ չեն սահմանափակուիր, այլ՝ կը մնան օրինութիւններ անկողոպտելի:

Կեանքէն դէպի վկայութիւն երթը կ'ենթադրէ հաւատք եւ գործ: Երթ մը, որուն մէջ աստուածահաճոյ ապրելակերպն է ուղին, մաքուր խղճմանըն է ուղեցոյցը, աղօթքն է ուժականութիւնը եւ Քրիստոսի օրինակին հետեւիլն է ուսանելին: Կեանքէն վկայութիւն ընթացող Եզնիկ Բահանայ Չղջանեանին վախճանման առաջին տարեդիցն է: 1980-ին, սրբակրօն քահանայի մը յիշատակին նուիրուած քարոզի մէջ, Գերշ. Տ. Արամ Եպս. Բէշիշեան (Այժմ՝ ՆՍՕՏՏ Արամ Ա. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ) ըսած է. «Երանի՛ անոնց, որոնք մահկանացու կը ծնին սակայն անմահ կը մեկնին այս աշխարհէն»: Ինչքան հոգեխօս

ազդեցութիւն ունին այս բարոյալից խօսքերը, երբ յետադարձ ակնարկով կը մտաբերենք Տէր Եզնիկին քահանայագործութիւնը: Ան հաւատքով սպառնազինուած, Սուրբ Զոգիով առաջնորդուած եւ սուրբ գրային գիտելիքներով հարստացուց իր կեանքը: Ուստի, փորձեց ձեռքով կատարելիս, կողմնակից ըլլալ բարիին, հետամուտ դառնալ հոգեշահին եւ ըստ կարելոյն հասնիլ ծիսական ժողովուրդին: Ահա թէ ինչո՞ւ ծիսայինները լուսարձակի տակ առին Եզնիկ քահանային դրական մօտեցումները, ողջմտութիւնը եւ բարեհամբաւ ընթացքը: Ան նաեւ սերտ հաղորդակցութիւն ունեցած է արաբախօս այն ընտանիքներուն հետ, որոնք Սրբոց Զառասնից Մանկանց Մայր եկեղեցւոյ կը պատկանին, որոնց պապերը նախատեղեւեան շրջանին Զալէպ հաստատուած էին:

Տէր Եզնիկը յարգալիք կեցուածքով եւ գոհունակ սրտով կ'ապրէր: Պատերազմի ահաւոր օրերուն լաւատեսութիւն կը դրսեւորէր, հակառակ քաղաքիս դաժան պայմաններուն: 2015 թուականին, 31 Դեկտեմբերի, երեկոյեան, փամփուշտի մը հետեւանքով թեթեւակի վիրաւորուեցաւ: Յաջորդ օրը պատարագ պիտի մատուցուէր: Բահանայ եղբայրները առաջարկեցին զինք փոխարինել, սակայն մնաց անողորմելի: Ան աստուածային նախախնամութեան փառք տուաւ, որով կարելիութիւն ունեցաւ պատարագելու:

Անժամանակ վախճանման տխրահռչակ լուրը շուտով տարածուեցաւ: Աշխարհի ծայրամասներէն բազմահազար ցաւակցական արտայայտութիւններ կային: Մարդիկ գովասանական գնահատականով, երախտագիտական զգացումներով ու մանաւանդ ափսոսանքով խօսեցան հոգելոյսին մասին, ուրիշներ խորագրաց ապրումով գրի առին իրենց տպաւորութիւններն ու յուզումները:

Զառասնից Մանկանց եկեղեցին իւրայատուկ նշանակութիւն ուներ իրեն համար: Սրբաշէն կամարներուն ներքեւ այդտեղ տարիներ ծառայեց: Սիրեց եւ սիրցուց Տիրոջ տան վայելչութիւնը: Ան պատրաստակամ էր գործակցելու ամենուն հետ: Յիշատակելի է իր բազմավաստակ ծառայութիւնը ծովափէն մինչեւ ճեզիրէի տարածաշրջանը: Ան որոշ գաղութներու մէջ բժախնդրութեամբ մարդահամարի ցուցակ պատրաստեց: Զալէպի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ տարիներ շարունակ Ս. Գիրքի սերտողութեան յանձնախումբին ատենապետութեան պաշտօնը ստանձնեց, Մայիսեան աղօթքներուն հաւատացեալներուն հմտութեամբ շարականներ ուսուցանեց, եւ յաճախ «Գանձասար»-ին մէջ թղթակցութիւններ պատրաստեց: Մեկ խօսքով, ծաւա-

լուն գործունեութեամբ իր լուման ընծայաբերեց ի խնդիր Զայ եկեղեցւոյ պայծառութեան եւ հոգեմտաւոր արժէքներու պահպանման:

Պանծալի եւ պատուաբեր իրագործումներով Եզնիկ Բահանան դարձաւ «Մշակ առանց ամօթոյ»: Զիմա, երբ խոր յարգանքով կը յիշենք հոգելոյս Տէր Եզնիկ Չղջանեանը, մեր աչքերուն առջեւ կը պարզուին անոր արժանիքները, ու մանաւանդ իր հաւատքի վկայութիւնը, որ խօսուելու արժազանգող պիտի

մնայ ընդմիշտ:

«Եկայք շինեսցուք սուրբ գիտական լուսոյ»: Տէր Եզնիկ Բահանան շարականին այս իմաստալից բառերը մեկնաբանեց հաւատարմութեամբ: Ան ոչ միայն սուրբ խորանէն քարոզեց, այլ՝ մարդոց հոգւոյն մէջ խորան կերտելու արդար ճիգ թափեց:

Արքայութեան մէջ հանգչիս, թող յիշատակդ յաւետ օրինեալ մնայ:

### ՓԻՐԸ ԱՃԱՏՈՒԹԵԱՆ...

Սկիզբ՝ էջ 16

Գաթրճեան համառօտ կերպով անդրադարձաւ հայութեան կեանքին մէջ, ի Զայաստան եւ ի Սփիւռս աշխարհի, գրադարաններու հիմնադրութեան եւ կարեւորութեան, զիրք նուիրելու օրուան խորհուրդին, ապա լուսարձակի տակ առաւ «Քրիստափոր» գրադարանի 100-ամեայ բեղուն գործունեութիւնը:

Աւարտին Գաթրճեան անդրադարձաւ գրադարանի ու գրադարանավարի դերին, շեշտադրեց գրադարանը սոր գիրքերով հարստացնելու, գիրքերը վերանորոգելով պահպանելու եւ վերադասաւորելու, գրադարանին կայքը աւելի մեծ շրջանակներու հասանելի դարձնելու, անոր պատմութիւնը գրի առնելու իրամայականը, դիտել տալով, որ որքան ալ արհեստագիտութիւնը զարգանայ եւ թուայնացած գիրքերը տարածում գտնեն, տպագիր գիրքը կը մնայ անփոխարինելի: (Գաթրճեանի խօսքը կը իրատարակեց մամբողջութեամբ, «Գանձասար»-ի յաջորդական երկու թիւերով):

Այս առիթով վարչութիւնը գրադարանի 100-ամեակը խորհրդանշող յուշանուէրներ յանձնեց համայնքապետներուն, ԶԶ հիւպատոսին, Պատկան Մարմինի ներկայա-


ցուցիչին, օրուան բանախօսին ու քանդակագործ Վարդգէս Պարսումեանին:

Օրուան եզրափակիչ պատգամը ուղղեց Բերիոյ Զայոց Թեմի Առաջնորդը: Սրբազան հայրը այս երեկոն առիթ սեպեց յարգելու մեր մէջ գիրքի հանդէպ սեր սերմանողներուն յիշատակը: Ան ըսաւ. «Քրիստափոր» անունը կրելով, այս գրադարանը, իր անանդական պարտականութեան կողքին մշտական մարտահրաւեր մը կ'ունդէ սերունդներուն՝ ապրումով, հաւատարմութեամբ եւ իմաստութեամբ շարունակելու հայ գիրքը պաշտպանելու նուիրական առաքելութիւնը»:

Գերշ. Տէր Մասիսեպա. դիտել տուաւ, որ գրադարանը այն միջավայրն է, ուր կը հաղորդուինք մեր պատմութեան, արժէքներուն եւ պայքարին հետ: «Զայ Յեղափոխական Դաշնակցութեան հիմնադիրներէն Քրիստափոր Միքայէլեան հայրենիքի ազատութիւնը փնտռած է: Ուստի «Քրիստափոր» գրադարանին ճամբով մեր նոր սերունդի երիտասարդներուն դիմաց ազատութեան միջավայր մը կը բացուի, հայ լեզուի նկատմամբ սերը կը խորանայ եւ մեր իրաւունքները պաշտպանելու խորունկ համոզումը արմատ կը նետէ»:

Զանդիսութիւնը իր անարտին հասաւ «Պահպանիչ» աղօթքով:

**ՀՈԳԵՀԱՆԳԻՍ**  
**Հոգելոյս**  
**Տ. ԵԶՆԻԿ ԲԶՆԱՅ. ԶՂՁԱՆԵԱՆԻ**



**Վախճանման Ա. տարեկիցի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 8 Մարտ 2020-ին, յաւարտ Ա. եւ Անմահ Պատարագի, Ս. Զառասնից Մանկանց Մայր եկեղեցւոյ մէջ, Սալիպէ-Զալէպ:**  
**Յետ հոգեհանգստեան արարողութեան ցաւակցութիւնները պիտի ընդունուին «Ն. Աղբալեան» սրահէն ներս:**

**ՀՈԳԵՀԱՆԳԻՍ**

*Շահինեան ընտանիքը շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ կամ հեռաձայնով մասնակից դարձան իրենց հարազատին՝*

**ՀԱՆԳՈՒՅԵԱԼ**  
**ՌԱՀԷԼ ՇԱՀԻՆԵԱՆԻ**



**մահուան սուգին:**  
**Զանգուցեայի քառասունիցի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 8 Մարտ 2020-ին, յաւարտ Ա. եւ Անմահ Պատարագի, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, Նոր Գիւղ-Զալէպ:**  
**Յետ հոգեհանգստեան արարողութեան ցաւակցութիւնները պիտի ընդունուին եկեղեցւոյ ներքնարահէն ներս:**



# ԱՆԱՐԱՏ ՅՐՈՒԹԻՒՆ



Կարո Արսլանեան

Անողորմ պատերազմը դեռ կը շարունակուի: Ծաղկաստան Յալթայի դեմքը չունի անցեալի ժպտուն երանգը: Երիտասարդները անել կացութեան մատնուած էին: Տարեցներուն համար արեւածագը վաղուց կորսնցուցած էր իր գրաւչութիւնը:

Միութենական տղաք՝ պատասխանատուներ, օր ու գիշեր ելքի մասին կը մտածէին:

Մինչեւ ե՞րբ հնչեցնել համբերութեան շեփորը, մինչեւ ե՞րբ տոկալ, մինչեւ ե՞րբ կտոր մը հացի փոխարէն յոյսով սնանկի:

Ամեն տեղ մահը իր դրոշմն էր դրած: Ամեն ընտանիքի մէջ նահատակի կամ հեռացած հարազատի ցաւը կը մխար:

Բայց Նարկիզին համար ամեն բան ուրիշ էր: Կեանքով լեցուն քառասունն անց ըլլալով հանդերձ, յոյսի ջերմ բոյնը, որ սրտին մէջ հիւսած էր միանակ, դեռ ամուր էր եւ հիրճնկալ:

Նարկիզներ շա՛տ մեր ամօրեայ կեանքին մէջ, սակայն քիչերուն միայն կը նկատենք, մէկ-մէկ կը հնայուինք անոնց կամքի ուժով, բայց չենք մօտենար անոնց՝ գէթ իրենց ջերմ բոյնի հիւսքին օգնելու ճիգով:

Նարկիզին համար կրթութիւնն ու խիստ դաստիարակութիւնը շատ կարեւոր գործօններ էին՝ կատարելալ ու բարեկեցիկ հասարակութիւն մը կերտելու համար:

Քանի մը վկայականներու արժանացած էր, գիշերը ցերեկին խառնելով անոնց մէջ իր հոգիին կտոր մը դրած էր:

Գիրն ու գրականութիւնը սրտին մօտիկ էին, կարծես անոնց ձեռքերով կը շօշափէր իրական կեանքը եւ որպէս իրաւաբան կը մերժէր կտրականապէս անարդարութիւնը:

Կիներուն իրաւունքներուն անվերապահ պաշտպանն էր: Վաղ տարիներէն կը պայքարէր, որ հայ կինը միշտ իր արժանապատիւ տեղն ու դերը ունենայ հայ ազգային կեանքէն ներս... եւ յաջողեցաւ:

Սուրիական տագնապի ցուրտ ու մութ տարիներուն երեւի շատ անելի ուժ էր յոյս ներշնչեց երիտասարդներուն, քան սովորական այլ պատասխանատուներ:

Ամեն օր, ամեն տեղ ըլլալով հայկական համայնքին մէջ տեղի ունեցած անցողորմէրուն իսկական թարգմանը դարձաւ:

\*\*\*

Գարնանային ցուրտ առաւօտ մըն էր:

Նարկիզ սովորական իր ժպիտն ու եռանդը դեմքին, թղթ ծրարները ամփոփելէ ետք իր սեւ պայուսակին մէջ, տան աստիճաններով հասաւ փողոց:

Շուրջը նայելով պահ մը երեւակայեց, թէ ամեն ինչ անարտած է, պատերազմի փոխարէն խաղաղա-

ւետ եւ օրինաբեր մթնոլորտը վերադարձած է կրկին:

Փակ խանութներուն դիմաց, ծառերը իրենց կանաչափայլ զգեստները հագած բարի լոյս կը նետէին սակաւաթիւ անցորդներուն:

Երկինքը պայծառ էր եւ արեւը անելի յուսալի կը շողար:

Քիչ մը թթուածին քաշելով կը սկսէր հանդարտալորով առաջանալ ու արագ միտքեր տարուբերել ուղեղին մէջ:

Մէկ-երկու դրացի խանութպաններ քիչ մը յոյսով ու հաւատքով գինուած կ'աւելին իրենց խանութներուն առջեւ կուտակուած փոշին եւ իրենց բարի լոյսով նաեւ սրտերուն վրայ նստած յուսալքութիւնը:

Նարկիզ կ'անցնի անոնց քովէն եւ ջերմ ժպիտով կը բարեւ իր կարգին խանութպաններուն ու կը հարցնէ, թէ այսօր կազի շիշերը պիտի հասնի՞ն, քանի որ տան մէջ հիւանդ մայրը տաք պահելու համար այլ միջոց չունի, բացի այդ կազով աշխատող վառարաններէն:

Ապու Քարիմը (Քարիմ կը նշանակէ առատածեռն մարդ) դեմքի գիծերը անորոշ ժպիտով մը ներկելով, «ինչալլահ» (Աստուծոյ կամքով) կ'ընէ:

Ու կը յիշէ, իր աչքերուն իսկ վկայութեամբ, որ պատերազմները ոչ միայն մարդկային կեանքը կը խլեն, այլեւ այնպիսի տարօրինակ եւ մութ տեսարաններ կը ստեղծեն, ուր մարդիկ ապրելու եւ գոյատեւելու համար կը ծախեն ամեն ինչ, առաջին հերթին սկզբունք ու պատիւ քիչ մը սնուելու, քիչ մը տաք նաւու, մէկ խօսքով քիչ մը պատըսպարուելու համար:

Նարկիզ զգուշ էր, գիտէր, լաւ գիտէր մարդոց որակները, վերջապէս քառասուն տարիներու կանացի հարուստ փորձ ունէր եւ մարդու աչքի բիբին մէջ կրնար կարդալ անոր հոգիին բազմախառոր սեւ ու սպիտակ էջերը:

Կանայք համեմատաբար անելի ուժեղ են երբ կեդրոնացած են: Անոնց բանականութիւնը անելի բարձր թռիչք ունի քան զզգացականութիւնը, սիրոյ ընկալումը նոր նուաճումներ կը թեւակոխէ միշտ եւ այդ պահուն արդարօրէն կը պահանջեն իրենց բաժինը տղամարդուն կողքին հաւասարե-հաւասար՝ լուծելու մինչեւ անջրպետային խնդիրները:

Նարկիզ ճիշդ այս փաղանգին կը պատկանէր: Ան ոչ միայն ամեն տեսակի անհատական անիրաւութիւններու մոլեռանդ պաշտպանն էր, նաեւ Յայ Դատի կամաւոր գինուորդ:

Իսկական օրինակելի հայուհի, որուն համար հայուն գոյութիւնը եւ ապագան անսակարկելի հարցեր են:

Ֆէյսպուքեան եւ այլ հասարա-

կական ցանցերու ու գրեթէ աշխարհասփիւռ բոլոր հայկական լրատուամիջոցներուն մէջ իր բողբոջող ճիշդ համակած էր համայնքի երիտասարդները:

Մայրը ուրախ էր եւ անշուշտ հպարտ իր մէկ հատիկով, սակայն կ'ուզէր, որ աղջկան սրտին մէջ հիւսուած ջերմ բոյնը իրական օճախի մը վերածուէր եւ հոն, իր մայրամուտին դեղնած օրերուն, լսեր թռուներու գարնանաբեր գեղգեղանքը:

Տեսակ մը իրաւունք է տարեց կնոջ մը համար, որ կեանք մը ամբողջ նուիրելով՝ կ'ակնկալէ ամենաթանկ նուէրը նոյնինքն կեանքէն:

Բայց արդէն նման սպասումներ անխմաստ էին եւ թռուներու փոխարէն պետք էր գրկել աղջկան տարած յաղթանակները:

«Աղջիկս, ուրախ եմ ու հպարտ քեզմով, զգո՛ւշ եղի՛ր, այս պայմաններուն մէջ վտանգաւոր քայլերու չդիմես, գիտեմ անվախ ես, սակայն վատ մարդիկ՝ շատ», միշտ կը յիշեցնէր մայրը:

«Մա՛մ, մի՛ մտահոգուիր, ես լաւ գիտեմ պաշտպանուիլ, պիտի քալեմ մինչեւ վերջ, ժողովուրդիս տազնապը իմ տազնապն է, ազգիս պատիւը ինձի համար սրբութիւն է, դուն անհոգ եղի՛ր: Ըսէ՛, ի՛նչ կ'ուզես բերեմ դուրսէն, սիրտդ ի՛նչ կ'ուզէ»:

«Քու առողջութիւնդ միայն, անփորձանք երթաս ու վերադառնաս», աղօթաբոյր վանկերով կը կրկնէր մայրը:


Եւ ակնկալուածը եղաւ...

Սկիզբը քանի մը սպառնացող նամակներով փորձեցին սպառնալ, «վախցնել» Նարկիզը: Յետոյ տան դիմաց քանի մը անգամ սատկած կատուներու դիակներ շարժեցին, բայց Նարկիզ անդորուելի մնաց: Ընդհակառակը օրե-օր թուրքին հանդէպ իր ունեցած վրեժն ու ոխը անելի ուռնացան, ժայթքելու պատրաստ իրաբուխի վերածուեցաւ, մինչեւ որ հասաւ իր նպատակին:

Ան քաջ գիտէր, որ Սուրիոյ մէջ կատարուածը գլխաւորաբար վայրագ թուրքին նախաձրագրած ճիւղն էր:

Յիմա խաղաղ էր անելի, թէեւ պատերազմի անարտը դեռ կ'ուշանար: Բայց չէր մարդու կեանքն ալ տեսակ մը պատերազմ է, չարի ու


բարիի անաւարտ պատերազմը: Մեզ մէ իւրաքանչիւրս իր ընկալումներուն համաձայն մերթ լուռ ու մերթ աղմկալի պատերազմ կը տանի խոտոր միտքերու եւ երեւոյթներու դէմ: Ոմանք ինքնակամ շուտ կը յանձնուին, տեսակ մը գերին կը դառնան իրենց աչքով ընկալածներուն, իսկ հոգին միշտ ալ կրնայ պատերազմը շարունակել յանուն սիրոյ եւ բարութեան, յանուն անհասկնալի ու մրոտ երեւոյթը լոյսով կրկին մկրտելու: Կը ճաշակենք ցաւը եւ ցաւին ճամբով մեր միակութեան կեանք կու տանք, միակութիւնը



կը վերածուի գոհաստեղանի եւ այդ սեղանին վրայ յանուն մեր համոզումին, յանուն մեր երազներուն, յանուն արդարութեան կը գոհաբերենք մեր ամբողջական ուժը ու ճիշդ այդ պահուն կը ծնին անելի կատարելալ, անելի ուժեղ «մենք»-եր:

Նարկիզի գիտակցութեան մէջ այս բոլորը բնական գոյներով ու երկնային ձայներով պատկերուած էին եւ ան, յղի այս անարատ արումներով ու միտքերով, վերջապէս ծնաւ ոչ թէ նոր միակութիւն մը, որ կրնար սովորական շնչաւոր մը դառնալ, այլ վերածնիլ տուաւ հազարաւորներու, որոնք պիտի քալեն դէպի լոյսը արդարութեան, ուր այր ու կին հաւասարե-հաւասար պիտի ճաշակեն իսկական սերը եւ անոնց մարմինները պիտի չայրին միայն սեռային հեշտանքներով, այլ հաշտարար կեանքի մը լուսաբացը պիտի դիմաւորեն ու պատերազմին, քանդուած հաւատամքի քարակոյտերը հատիկ առ հատիկ կրկին շարելով պիտի կառուցեն իրենց հոգիներուն անառիկ բերդը:

**ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ**  
**Հանգուցեալ**  
**ԱԶՍՏՈՒՀԻ ՃՈՒՀԱՐԵԱՆ**  
**(Ծնեալ՝ ԳՈՆԻԱԼԵԱՆ)**



Հանգուցեալի մահուան Ա. տարելիցի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 8 Մարտ 2020-ին, յաւարտ Ս. Եւ Ամմահ Պատարագի, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, Վիլլաներ - Յալթայ:

Յետ հոգեհանգստեան արարողութեան ցաւակցութիւնները պիտի ընդունուին հանգուցեալին դստեր (Տեր Եւ Տիկ. Ժան Սուսալի) բնակարանէն ներս:



Աշակերտական Անկիւն

ՄԵՐ ՍԵՐՈՒՆԴԸ



Սիլվի ժամկոչեան

Շրջապատիս մէջ տարածուած համոզում է, թէ մեր սերունդը անդաստիարակ է...

Հազիւ մեր մանկութիւնը սկսաւ, նոյն ատեն ալ պատերազմը ծայր առաւ...



Երբ 4-րդ դասարան էինք, արդէն ջուր կը կրէինք...

Համբերեցի նք, սպասեցի նք եւ երագեցի նք խաղաղ, հանգիստ ու ապահով օրուան գալուստը...

Բոլորս ուրախացանք, մեր դպրոցները վերաբացուեցան, բայց կամաց-կամաց ոմանք սկսան թերահաւատ դառնալ...

Այս պայմանները իմանալով մէկտեղ, մեծերը երբեմն մեզի հետ ծայրայեղ խստութեամբ կը վարուին...

Անտեղի խստութեամբ մի՛ վարուիք մեզի հետ, որպէսզի չխրտչինք այս քաղաքէն, դպրոցէն եւ դասէն:

Թ. կարգ Ազգ. Զարէն Եփփէ Ծենարան

ԱԶԱՏՈՒԹԻՒՆ



Լուսիանա Գայապալեան

Ամեն մարդ իր կենսքին ընթացքին ազատութիւն կը փնտռէ: Կարգ մը մարդիկ ունին կամ գտած են իրենց ազատութիւնը...



Մեզի՛ պատանիներուս համար, ազատութիւնը մեր ուզած ատեն տուն վերադառնալն է, ուզած ատեն, մեր ուզած տեղը երթալը...

Ես ազատութիւնս գտնելու համար կ'ուզեմ ճամբորդել: Հաւանաբար ճամբորդելով ալ չգտնեմ գայն՝ բայց սա իմ համոզումն է...

Ճ. կարգ Ազգ. Զարէն Եփփէ Ծենարան

Corona-virus

Կարծեմ բոլորդ համաձայն եք, որ ներկայիս ամենաշատ գործածուող բառն է այս աշխարհի բոլոր լեզուներով ու բոլոր անկիւններուն մէջ...

Բժշկագիտական տեղեկութիւններ պիտի չտամ, այլ նպատակս միայն... լեզուական բնոյթ ունի. հարցը կը վերաբերի այս եզրի հայերէն հաւանական թարգմանութեան:

\*\*\*Հայաստանի մէջ ան միանշանակ կորոնավիրուս է ու վերջ: \*\*\*Սփիւռքի մէջ՝ գորոնա ժահր, քորոնա ժահր, պսակածէ վարակ: Ուրեմն չորս տարբեր անուանումներ եւ ուղղագրութիւններ:

Ստորեւ քննենք խնդրոյ առարկայ եզրերը, ապա բերենք մեր առաջարկը: \*\*\*

Virus լատիներէն է եւ կը նշանակէ թոյն: Բառիս հիմնական իմաստն է այս:

Ասոր հայերէն հոմանիշն է ժահր, որ նմանապէս կը նշանակէ թոյն: Ուրեմն՝ իրենց մեկնակետային իմաստով՝ ասոնք բացարձակ նոյնանիշ են:

Ծանօթ. - Ըստ Աճառեանի, ժահր-ը պարսկական փոխառութիւնն է zaher բառին, որ կը նշանակէ թոյն: Այս իմաստով ալ թրքերէնը այսօր կը կիրարկէ գայն. ան տարածուած էր նաեւ թրքախօս արեւմտահայոց մէջ եւ մինչեւ հիմա ալ ան բացակայ չէ մեր կարգ մը հայրենակիցներու բառամթերքէն:

Պէտք չէ միամտաբար մտածել, թէ ան զահր է, իսկ մեր բառը՝ ժահր, ուրեմն տարբեր բառեր են ասոնք: Ո՛չ. պարսկական Z հնչիւնը, անցնելով հայերէնին, դիւրաւ կու տայ ժ. օրինակ՝ պարսկերէն zamanak-ը հայերէն տուած է ժամանակ. ուրեմն՝ Z>ժ:

Լատիներէն եզրը փոխ առած են եւրոպական գրեթէ բոլոր լեզուները, մինչ ժահրը մնացած է, - եթէ պետք կայ ըսելու, - միայն հայերէնի մէջ: Կը տեսնե՞ք, նոյնիսկ փոխառու լեզուն ինքը՝ պարսկերէնը, չի ճանչնար այս արտասանութիւնը: Ե՛հ, ի՞նչ ընենք, հայերէնի ճակատագիրն է այս՝ առանձնակի, միակի, եզակի ըլլալու վեհութիւնը եւ դատապարտութիւնը...

Չարմանալիօրէն ժամանակին հետ այս գոյգ եզրերը այդ օտար փոխառու լեզուներուն եւ հայերէնի մէջ ունեցած են իմաստային փոխաբերական զգալի հանգիստութիւններ:

- Կը համադրենք օտար բառարաններու բացատրութիւնները: \*\*\*Կաչուկ, մածուցիկ, կարային գարշահոտ ու ճահճային հեղուկ \*\*\* Որեւէ գործօն, որ կը թունաւորէ միտքը եւ հոգին: \*\*\* Նենգութիւն, դառնութիւն, ատելութիւն: Տեսնենք մեր բառարանագիրներուն տուած իմաստները: ա) Պոլսահայ բառարաններ \*\*\*Նոր հայկազեան -- թոյն, մահադեղ \*\*\*Արմատական -- թոյն \*\*\*Գաբամաճեան -- թոյն բ) Արեւելահայ բառարանագիրներ \*\*\*Մալխասեան -- թոյն, գարշահոտ թարախ \*\*\*Աղայեան -- թոյն, գարշահոտութիւն, մաղձ, մոլութիւն, ախտ, դառնութիւն \*\*\*Ակաղեմիա -- թոյն, մահադեղ, թարախ, մաղձ, մոլութիւն գ) Արեւմտահայ բառարանագիրներ \*\*\*Գայայեան -- թոյն, մահադեղ, մաղձ, դառնութիւն \*\*\*Ճիգմեճեան -- թոյն, մահադեղ, թարախ \*\*\*Տեր Խաչատուրեան -- թոյն, մաղձ, թարախ, դառնութիւն \*\*\*Կռանեան -- թոյն, մահադեղ, մաղձ, դառնութիւն Ինչպէս նկատելի է բառիս իմաստը օտար եւ հայ լեզուներու մէջ ունեցած է նիւթական եւ վերացական մօտաւորապէս նոյն գարգացումները: \*\*\*

Օտար բառարաններու մակարդակին, լատիական virus-ը վերջին դարերուն դարձած է նաեւ բժշկագիտական եզր մը՝ բնորոշելով մանրէներու տեսակ մը. ամ այդ կը գտնենք հետեւեալ սահմանումը. «Ենթամանրադիտակային ախտագին մանրէ, որ կ'աճի ու կը բազմանայ մասնաւորաբար ապրող էակներու՝ մարդկային, կենդանական եւ բուսական բջիջներուն մէջ՝ աւերելով անոնց կառոյցը»:

Ահա այս տուեալն է, որ կը պակսի ժահր-ին՝ մեր հին ու նոր բոլոր



## ԸՆԿԵՐԱԲԱՐՈՅԱԿԱՆ

### ԳԻՏՈՒԹԵԱՆ, ԼՈՅՍԻ ԵՒ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՆԱՊԱՐՅՈՒՆ



Խաչիկ Ծախիկյան

Յարդ միլիոնավոր մարդիկ մեծ գիտնական հցիակ Նիոլոբոնի հետ կը փորձեն իմանալ գաղտնիքը այն անդիմադրելի եւ գարմանահրաշ ձգողականութեան, որ պատմութեան սկիզբէն մինչեւ մեր օրերը մարդ արարածը ամբողջ կառչած կը պահէ երկրագունդին:

Ծնարտախօսութիւնն ու ճշմարիտին ձգտումը արդէն հազուագիտ եւ ժամանակավրէպ երեւոյթներ կը նկատուին ներկայիս, նոյնիսկ միամտութիւն յուշող անհեթեթ եւ անհարկի ցանկութիւն:

Սուտը դարձած է կեանքի պահանջք, համեմ, իսկ նորօրեայ «տղամարդուն» համար՝ արժանիք:



աղաւաղուած է եւ դարձած՝ չարիքի ու վատութեան անհանդուրժելի օրրան, որ միմիայն ատելութիւն եւ նողկանք կ'առթէ, արիւն եւ մահ կը բուրե, արցունք եւ ողբերգութիւն կը պատճառէ... այսուհանդերձ կը շարունակէ շլացնել եւ գերել շատեր, մինչեւ անգամ անոնք, որոնք համոզուած են՝ թէ ներկայ մեր աշխարհը արդէն շատ բան կորսնցուցած է իր հմայքէն, գեղեցկութենէն եւ բարիքներէն:

Ոչ միայն իր ձգողական օրէնքով ու դիւթանքով բնորոշուող երկրագունդը, այլ անոր մաս կազմող ամեն գոյութիւն դարձած է տարօրինակ եւ հիասթափեցնող, որովհետեւ այնտեղ շարունակուող կեանքը այլակերպուած, աղաւաղուած եւ գլխիվայր շրջուած է այսօր:

Հասարակական ընկալումներն ու կողմնորոշումները հիմնովին փոխուած են: Շրջապատի հետ իրենց փոխյարաբերութեան մէջ մարդիկ հանդէս կու գան կողմնապաշտ եւ շահադէտ մօտեցումներով: Կեանքի նշանակութեան թէ մնայուն արժեքներու առնչութեամբ անոնց չափորոշիչներն ու գնահատումները խաթարուած են, եղծուած...:

Բնականը կը համարուի գարտուղի, իսկ արտասովորը՝ ընթացիկ:

Ապօրինին կանոնական ու զգեցած է եւ կը դատուի օրինական, մինչդեռ՝ իրաւական հիմք ունեցող շատ մը պարագաներ եւ կարգաւորումներ առհասարակ կը մերժուին ու կ'արհամարհուին:

Մօր կամ դպրոցական դաստիարակին կողմէ երեխային մատուցուող առաջին դասին հիմք կազմող

Խաբելութիւնը կը ներկայանայ բազմապիսի երանգներով, դիմակներով եւ վերանուանումներով, այն աստիճան՝ որ գեղծարարութիւնը, նենգամտութիւնը, շողոքորոտութիւնը, կեղծիքը... կը սեպուին հնարամտութիւն եւ առաւելութիւն:

Ուղղամտութիւնը, անաչառութիւնը պարկեշտութիւնը, արդարադատութիւնը գիշած են իրենց իմաստն ու բովանդակութենէն, եւ վերածուած՝ յետամնացութեան ու խաւարամտութեան հոմանիշներու:

Ուղիղը, ճիշդը, կատարեալը ժամանակավրէպ կ'որակուին, մինչ՝ ծուռը, սխալը, թերին պատիւներով կը դիմաւորուին:

Արժանապատուութիւնը, հաւատարմութիւնը, անկեղծութիւնը անցած են լուսանցքուած ու մոռցուած ունակութիւններու եւ առանձնայատկութիւններու շարքին, որոնց կարելի է հանդիպիլ լոկ վեպերու, մանկական հեքիաթներու կամ պեւեր մահկանացուներու յուշերուն եւ երեւակայութեանց մէջ:

Ամենակալին նկատմամբ անխախտ հաւատքը, որեւէ գաղափարի կամ իտեալի կառչածութիւնը, սկզբունքային յանձնառութիւնները... ծայրայեղութիւններու պարունակին մէջ կ'ընկալուին սոսկ, իսկ ճշդապահութիւնը, պարտաճանաչութիւնը, բժախնդրութիւնը, բարեխղճութիւնը, օրինակելի վարքագիծը... կը գնահատուին իբրեւ տհաճ եւ անըղծալի կրաւորականութիւն կամ համակերպութիւն:

Քաղաքավարութիւնը, ազնուութիւնն ու համեստութիւնը օտարացած են մեր կեանքէն: Խոնարհութիւնն ու յարգալի վերա-

Շար. 19 14

### «ՆԱՅ ՄԿԱՌԻՏԻ ՕՐ»Ը ՔԵՍԱՊԻ ՄԷՋ

Հայ սկաւուտը, հաւատարիմ իր նշանաբաններուն՝ «Բարձրացիր

ապա բացման իր խօսքով ան ըսաւ. «Հայ Սկաւուտի կեանքին մէջ իւրա-



Բարձրացուր»ին եւ «Միշտ Պատրաստ»ին, հաւատարմօրէն կը ծառայէ ՀՄԸՄ-ին, որպէս առողջ մարմին, արթուն միտք ունեցող երիտասարդութիւն իր կարելին ի գործ դնելու ազգին ու հայրենիքին պանծացման:

յատուկ եւ մասնակի տեղ կը գրաւէ «Սկաւուտի օր»ը, ՀՄԸՄ-ի սկաւուտները ըլլալով աւանդապահ, գիտակից եւ կառչած մտալով հայու ինքնութեան «Սկաւուտի օր»ուն տուած են հայեցի դիմագիծ»:

Արդարեւ, հովանաւորութեամբ ՀՄԸՄ-ի Քեսապ Մասնաճիւղի վարչութեան, կազմակերպութե-

Այնուհետեւ ընթացք առաւ գեղարուեստական յայտագիրը, որ կ'ընդգրկէր՝ ներկայացում «Chat-ի Ընկերը» (սիրժ գրուած է օրը.



եամբ Սկաւուտ Խորհուրդին, ի նբապետական եւ աստիճանաւորական կազմերուն, Կիրակի, 1 Մարտ 2020-ի, երեկոյեան ժամը 5:00-ին, Քեսապի «Սարդարապատ» սրահէն ներս յիշատակուեցաւ «Հայ Սկաւուտի օր»ը:

Յուշիկ Յ. Ղազարեանի կողմէ), Չափական մարզանք, հայկական պար, բուրգ եւ թմալիկ:

Ձեռնարկին ներկայ էին Տեր Արշակ Քահանայ Աւագան, միութիւններու ներկայացուցիչներ, ՀՄԸՄ-ականներ եւ ծնողներ:

Սկաւուտները յայտագիրը ներկայացուցին ամենայն բժախնդրութեամբ եւ եռանդով:

Օրուան հանդիսավար Յովսէփ Բեւեղեան ըսաւ. «ՀՄԸՄ-ը պողպատէ կտրծքով արիւններու միութիւն է: Արիւններու կարաւանին երթը ո՛չ մէկ արգելք կրնայ կատարել: Փարձու պատիւ ՀՄԸՄ-ի ուխտեալներու կարաւանին»: Ապա ան սկաւուտները բեմ հրաւիրեց:

Յայտագիրի աւարտին տեղի ունեցաւ խոստման արարողութիւն, նորագիրքի եւ նորընծայի վկայականաց բաշխում, ինչպէս նաեւ ըն-

Օրուան հանդիսավար Յովսէփ Բեւեղեան ըսաւ. «ՀՄԸՄ-ը պողպատէ կտրծքով արիւններու միութիւն է: Արիւններու կարաւանին երթը ո՛չ մէկ արգելք կրնայ կատարել: Փարձու պատիւ ՀՄԸՄ-ի ուխտեալներու կարաւանին»: Ապա ան սկաւուտները բեմ հրաւիրեց:

Յայտագիրի աւարտին տեղի ունեցաւ խոստման արարողութիւն, նորագիրքի եւ նորընծայի վկայականաց բաշխում, ինչպէս նաեւ ըն-

Շեփորախումբի նուագով հնչեցին Սուրիական Հայրենիքի, Հայաստանի Հանրապետութեան եւ «Ո՛վ Հայ Արի» քայլերգները:

Յայտագիրի աւարտին տեղի ունեցաւ խոստման արարողութիւն, նորագիրքի եւ նորընծայի վկայականաց բաշխում, ինչպէս նաեւ ըն-

Արի-արենոյշ միաւորի պատասխանատու Մարի Շէփուկեան ներկաները հրաւիրեց մէկ վայրկեան յոտնկայս յարգելու յիշատակը ՀՄԸՄ-ի ննջեցեալներուն եւ Սուրիական Հայրենիքի նահատակներուն,



թերցուեցաւ ՀՄԸՄ-ի Սուրիոյ Շրջանային Սկաւուտ Խորհուրդի կողմէ յղուած շնորհաւորագիրը:

Ձեռնարկը իր աւարտին հասաւ շեփորախումբի «Յառաջ՝ Նահատակ» քայլերգին նուագով:

Բիւր յարգանք ու պարծանք ՀՄԸՄ-ի կերտիչներուն, առաւել կրող ու եռանդ նորահաս սերունդներուն:

Թղթակից



## ՄՏԱՄԱՐԶԱՆՔ



### ԽԱԶԲԱՌ (ՄՆ 335)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1								■				
2		■										
3					■			■			■	
4				■				■				
5		■	■				■					
6										■		■
7					■			■				
8			■	■		■					■	
9										■		
10					■	■	■	■				
11	■			■			■			■	■	
12												

#### Հորիզոնական

- Հեռանալ, օտարանալ: Հին հասկացողութեամբ՝ հրաշք:
- Հայ միջնադարեան աստուածաբան եւ քերական, որ եղած է Գլաձորի համալսարանի ուսուցչապետերէն:
- Կարգ: Հակառակ՝ 430: Տարածքի միաւոր:
- Բոցի խիստ տաքութիւն: Թուր, նրան: Հակառակ՝ անօթ:
- Հակառակ՝ դասաժամ: Աղեղնածէ շինուածք:
- Յովհաննու Աւետարանի 15-րդ գլխուն մէջ գրուած է. «Մեծագոյն սերը այն սերն է, որով մարդ ինքզինը ..... իր բարեկամներուն համար»: Շարկապ:
- Ոջիլի հակիթ: Ձայնակիչ: Ասացուածքը կ'ընէ. «Ժամանակը ..... է»:
- Հակառակ՝ իրարայաջորդ տառեր: Իգական անուն:
- Մահաժամ, ճգնաժամ: Տառի մը անունը: Հակառակ՝ գոյութիւն ունին:
- Կոճակի օղակ: Խառնատառ՝ կենդանիի տեսակ:
- Տառի մը դրացիները: Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան քաղաքներէն:
- Հայաստանի Ա. Հանրապետութեան չորրորդ վարչապետը:

#### Ուղղահայեաց

- Աւետիք Իսահակեանի ընդարձակ վէպերէն:
- Կրկնուած ձայնաւորներ: Լաւագոյն տարրերու ամբողջութիւն:
- Ճեղք: Որովիտէտէ: Աշխարհի հնագոյն քաղաքներէն:
- Խօսք: Խիտ, պինդ: Անձնական դերանուն:
- Հակառակ՝ անձնական դերանուն: Ուտելիք, կերակուր: Անձնական դերանուն: Հակառակ՝ իրարայաջորդ տառեր:
- Տարբեր կերպով: Պաղ, գաղջ:
- Ակրաները մասամբ պատող միս: Հարցական դերանուն: Հակառակ՝ տառի մը դրացիները:
- Հակառակ՝ 660: Ձայնաւոր տառեր: Տառի մը անունը:
- Ականաւոր: Փակած, կպած:
- Հայ գուսան-երգահան: Դանդախաւանդ:
- Հակառակ՝ 6001: Նենգ, դաւ: Հակառակ՝ 7001:
- Վտիտ: Անմիջապէս:

### Պատրաստեց Մարինա Զիւլբոյեան-Պօղիկեան

### ՍՈՒՏՈՔՈՒ (ՄՍ 334)

Տեղաւորէ՛ (1-9) թուանշանները (9x9) քառակուսիներուն մէջ այնպէս, որ իւրաքանչիւր հորիզոնական եւ ուղղահայեաց տողի մէջ, ինչպէս նաեւ (3x3) տուփիկի մէջ մէկ անգամ արձանագրուին:

				3				9
				6		2	1	
	1			5		7		
	5	9	6					
6		7		4		3		5
	3			9	6	8		
			7				4	8
		2		1				
5	4			9		7		2

### ՊԱՅՈՒԱԾ ԲԱՌ (ՄՊ 105)

Եղիշէ Զարեանցի բանաստեղծութիւնները նշանակելով գտէ՛ք պահուած բառը:

Պահուած բառը 18 տառերէ կը բաղկանայ եւ կը ներկայացնէ Զարեանցի բանաստեղծութիւններէն մէկը:

ա	յ	բ	ա	ծ	ե	բ	գ	ե	բ
ս	ն	մ	ա	հ	ո	ւ	ա	ն	ե
լ	ո	ք	ա	մ	ի	ն	լ	ս	ի
մ	ե	մ	ն	ա	ն	ի	ո	բ	ւ
պ	շ	գ	ա	ո	ս	հ	ե	ս	գ
հ	ա	ա	ո	ե	ւ	կ	յ	ի	ա
մ	ա	տ	տ	ւ	ն	թ	ա	բ	գ
օ	ե	մ	գ	բ	ն	ս	ի	ո	ե
բ	տ	ս	ա	ա	ա	ե	ն	ւ	լ
ս	մ	ե	բ	բ	մ	մ	ի	մ	ն

«Այրած Երգեր», «Մահուան Տեսիլ», «Ընկեր», «Քամին», «Անքնութիւն», «Մեր Լեզուն», «Պատգամ», «Սոմա», «Մօրս Համար Գազել», «Ես Սիրում Եմ»

## ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

### ԽԱԶԲԱՌ (ՄՆ 333)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	բ	ե	բ	ի	մ	ա	տ	բ	ա	ս		
2	ա	բ	ա	մ	բ	ի	կ	բ	բ	ի		
3	բ	մ	մ	ա	յ	ե	ն	ա	բ	ա	ն	
4	ա	հ	կ	հ	ա	ն	կ	բ	ա			
5	խ	ա	կ	մ	ե	ծ	պ	ա	հ	բ		
6	ի	բ	ա	ւ	բ	ի	ն	ե				
7	ւ	թ				ե	ն	ծ	ա	գ		
8	ն	ա	ւ	ա	ա	բ	դ	ե	ւ	ա		
9	կ	ա	ս	ի	ա			ա	լ	ն		
10	գ	լ	ի	մ	ի	լ		ա	ձ			
11	օ	բ	կ	ա	բ	ո	յ	բ	ա			
12	դ	ա	բ	ա	ն		կ	ո	հ	ա	կ	

### ՍՈՒՏՈՔՈՒ (ՄՍ 332)

9	6	4	1	7	8	5	2	3
2	8	5	4	6	3	1	9	7
3	1	7	9	5	2	6	4	8
4	5	9	2	3	6	7	8	1
6	3	8	7	1	4	2	5	9
1	7	2	8	9	5	3	6	4
5	9	3	6	4	1	8	7	2
8	4	1	5	2	7	9	3	6
7	2	6	3	8	9	4	1	5

### ՊԱՅՈՒԱԾ ԲԱՌ (ՄՊ 104)

Պահուած բառը՝ «Էջ Միածինն Ի Հօրէ»





**ԽՆՃԱՆԿԱՐ**



Մեան Ագաթիկեան-Պարմաքզեան

**ՔՈՐՈՆԱ ԺԱՅՐ  
ԿԱՄ ՊՍԱԿԱԶԵՒ ՎԱՐԱԿ**



**ԽՈՅ**

Շաբթուան սկիզբը յաջող պիտի անցնի: Առիթ պիտի ունենաք հետաքրքրական նախասիրություն մը ձեռք ձգելու եւ ցոյց տալու ձեր տաղանդը:



**ՏՈՒԼ**

Մերթ ընդ մերթ ուղղեցեք այլոց սխալները եւ պիտի տեսնեք, թէ ինչպէս ժամանակի ընթացքին դրական գործօններու ազդեցութիւնը պիտի գործադրուի:



**ԵՐԿՈՒՐԵԱԿ**

Դրամական հարցերը ցանկալի է լուծել շաբթուան առաջին կիտուն: Վստահեցե՛ք ձեր նախագագու մին թէ՛ գործնական կեանքի եւ թէ ձեր յարաբերութիւններուն մէջ:



**ԽԵՅՁԵՏԻՆ**

Սովորականէն աւելի դժուարութիւններու կրնաք հանդիպիլ այս շաբաթ, բայց բաւականաչափ ուժ, գիտելիք եւ փորձառութիւն կուտակած էք զանոնք յաղթահարելու համար:



**ԱՌԻՇ**

Շաբաթասկիզբին կարգ մը գործեր կրնան յետաձգուիլ եւ կրնան յառաջանալ անսպասելի հարցեր, որոնց լուծման համար անհրաժեշտ է յաւելեալ ջանք թափել:



**ԿՈՅԱ**

Ձեր յարաբերութիւնները չվտանգելու համար խուսափեցեք անտեղի բախումներէն:



**ԿԵՒՈՔ**

Թերեւս նեղանաք ձեր շրջապատի միջամտութիւններէն, սակայն անոնք կրնան օգտակար ըլլալ:



**ԿԱՐԻՃ**

Այս շաբթուան սկիզբը նախընտրելի է կարելոր որոշումներ չգոյացնել՝ խուսափելու վտանգներէն:



**ԱՐԵՂԱՍՈՐ**

Բարենպաստ շաբաթ է գործնական հարցեր քննարկելու, համագործակցութիւն սկսելու եւ ջանքեր միաւորելու համար:



**ԱՅԾԵՂՁԻՐ**

Հաճելի լուրեր պիտի ստանաք այս շաբաթ, անսպասելի առաջարկներ ու հրաւերներ, որոնք պիտի չմերժեք: Լաւ տրամադրութեամբ պիտի սկսիք աշխատանքային շաբաթը:



**ՋՐՅՈՍ**

Աւելի լաւ է, որ ապաւինիք ձեր սեփական ուժերուն: Ձեր ստեղծագործ միտքը ձեր յաջողութեան լաւագոյն գրաւականն է:



**ՁՈՒԿ**

Պատեհ առիթ է լուրջ հարցեր քննարկելու համար: Անհրաժեշտ է ժամանակին կատակել աշխատանքը, տեղին արտասանել հաճելի խօսքեր, ձեր գրուցակիցը գրաւելու համար:

Քորոնա ժահրը կամ պսակածէ վարակը շնչառական ընդհանուր համակարգը հարուածող ժահրն է, որուն տարբեր երկու տեսակները մեզի ծանօթ են՝ 2002-ին Չինաստանի մէջ սուր շնչառական համախտանիշը (SARS) եւ 2012-ին Միջին Արեւելքի շնչառական համախտանիշը (MERS) Սեուտական Արաբիոյ մէջ:

**ԱԿՏԱՃԱՆԱԳՈՒՄԸ**

Չինաստանի իշխանութիւնները 31 Դեկտեմբեր 2019-ին Առողջապահութեան Համաշխարհային Կազմակերպութեան հաղորդած էին անյայտ տեսակի համաճարակի մը մասին: Համաճարակը սկիզբ առած է 11 միլիոն բնակչութիւն ունեցող Ուոհան քաղաքին մէջ:

Ըստ Առողջապահութեան Միջազգային Գործակալութեան, Այս ժահրով վարակուածներուն թիւը այսօր բարձրացած է 86.980-ի, իսկ զոհերուն թիւը՝ 2.979-ի: Ան ներթափանցած է աւելի քան 50 երկիր: Հիւանդներու եւ զոհերու թիւը օրե օր կ'աւելնայ: Աշխարհի վրայ մարդիկ խոճապի մատնուած են սրընթաց տարածում ունեցող պսակածէ ժահրին պատճառով:

Պսակածէ ժահրը վտանգաւոր է, որովհետեւ շատ արագ կրնայ փոխանցուիլ: Ան կը տարածուի եւ կը փոխանցուի օդի ճամբով: Վարակուած անհատը փնտրուելով կամ հագալով ժահրը կը տարածէ օդին մէջ եւ իր շուրջը գտնուող իրերուն

**ԱԿՏԱՆՇԱՆՆԵՐ**

Քորոնա ժահրին ախտանշանները կը նմանին կրիփի (հարբուխ) ախտանշաններուն, սակայն հիւանդութիւնը շատ արագ կը բարդանայ եւ հիւանդին մօտ թոքաբորբ յառաջացնելով անոր մահուան պատճառ կը դառնայ:

- 1-Կարելորագոյնը՝ շնչառական սուր անբարարութիւն
  - 2- Ջերմութիւն
  - 3-Դող
  - 4-Չոր հագ
  - 5-Մկանային ցաւ
  - 6-Գլխացաւ
  - 7-Զթախոս
  - 8-Փորհարութիւն
- Առողջապահութեան Համաշխարհային Կազմակերպութիւնը վարակէն խուսափելու եւ



զայն կանխարգիլելու համար ներկայացուցած է խորհուրդներ:



վրայ: Առողջ անձեր կը վարակուին ապականած օդը շնչելով կամ վարակուած անձերուն ու անոնց իրերուն դպչելով: Հիւանդութեան գաղտնի շրջանը 2-էն 14 օր է:

Պետք է աւելցնել, որ այս ժահրով վարակուելէ ետք, անհատին մօտ ախտանշանները ի յայտ գալէ առաջ, ան կրնայ վարակել իր շրջապատը:

Այս իսկ պատճառով ճամբորդութեան ընթացքին պետք է զգոյշ ըլլալ, մասնաւոր օդանավներու մէջ, երբ մարդիկ արուեստական թթուածին կը շնչեն: Սակայն ըստ ուսումնասիրութիւններու, Չինաստանէն ծանրոցները սպառնալիք չեն ներկայացնել մարդոց համար՝ չկայ որեւէ ապացոյց, որ անոնց միջոցով կարելի է վարակուիլ քորոնա ժահրով:

Յաճախակի ձեռքերը օճառով լուալ եւ պարբերաբար մաքրել ալքոհոլ պարունակող նիւթերով:

Հագալու եւ փռնուտալու ատեն՝ քիթն ու բերանը ծածկել թաշկինակով, ու անմիջապէս թափել թաշկինակը ու լուալ ձեռքերը: Հեռու մնալ ջերմութիւն կամ շնչառական հարցեր ունեցող անհատներէ:

Հագ, ջերմութիւն կամ շնչառութեան նեղութիւն ունենալու պարագային, անյապաղ դիմել բժիշկի:

Խուսափիլ կենդանական ծագում ունեցող հում կիսեփ սննդամթերքէ:

Մինչեւ օրս հիւանդութիւնը կանխարգիլող պատուաստ գոյութիւն չունի, սակայն Moderna Therapeutics ընկերութիւնը, որ կը գտնուի ԱՄՆ Մասաչուսեթս նահանգին մէջ, եւ որուն նախագահն է ամերիկահայ Նուպար Աֆէեան, պատրաստած է պսակածէ ժահրի պատուաստանիւթ մը եւ ուղարկած է փորձարկութեան: Ամերիկայի Միացեալ Նահանգներու դիրագոգացութեան ու վարակիչ հիւանդութիւններու ազգային հիմնարկին մէջ փորձարկութիւնները պիտի սկսին Ապրիլին:

Կարելի է բուժուիլ այս ախտէն: Աշխարհի վրայ բազմաթիւ պարագաներ բուժուած են, արդ մինչեւ այսօր 86.980 վարակուողներէ 42.318 անհատներ ապաքինած են:



## ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

### ԳԻՏՈՒԹԵԱՆ...

Սկզբը՝ էջ 11

բերմունքը երկչոտության կը վերագրուին... իսկ հեգնությունը, բարեհամբոյր նկարագիրն ու բարեկրթությունը տկարության եւ մեղկության ապացույցներ կ'ընդունին:

Անհատությունը, հերետիկոսությունը, աստուածային ճշմարտությունները ուրացող հերձուհիությունը դարձած են համարժեք կամ նոյնանիշ պայծառամտության եւ բանիմացության, որով պետք է սուքալ, մեծամտիլ՝ իբրեւ բարձր բանականության եւ տրամաբանության ցուցանիշ կամ երաշխիք:

Կեանքը վերածուած է յարատեւ պայքարի, խօսական եւ հեւքոտ վազքի, անկարեկից եւ վայրագ մրցակցության:

Մարդիկ յամառորէն եւ անընդմեջ կը շարժին, կը սուրան դէպի առաջ, իրենց աչքերը միշտ յառած դէպի վեր, դէպի հեռուոր ու անծայր հորիզոններ, յաւակնելով նուաճել անմատչելի բարձունքներ... իրենց անսասն մղումին եւ մոլուցքին մէջ շրջանցելով ամեն չափ, կշիռ եւ սահման...: Իրողաբար, սակայն, անոնք օրըստօրէ աւելի կը խրին կեղտի եւ ապակասութեան տիրման մէջ, գահավեժ ընթացքով կը թաւալին դէպի ահաւոր անկում, դէպի բարոյական անդունդ, դէպի մարդկային հոգեմտաւոր խորխորատ...:

Ամեն ոք շնչահեղձ վազքով եւ անտեղիտալի պայքարով կը տենչայ բախտաւորուիլ, փառքի, պերճանքի, հարստութեան, գանձերու, կալուածներու, ինչքերու եւ բարօրութեան արժանանալ, աւելին՝ կը նկըրտի բարձրագոյն դիրքերու, պաշտօններու, պատիւներու, համբաւի եւ իշխանութեան տիրանալ, խորհելով թէ այդ կերպով միայն կարելի կ'ըլլայ ուրախութեան եւ երջանկութեան հասնիլ: Սակայն դժբախտաբար, շատ չանցած կ'անդրադառնայ թէ այդ բոլոր ճիգերն ու հետեւողական մաքառումները ապարդիւն են եւ ունայն, այդ բոլոր երազներն ու ակնկալութիւնները ցնորք են եւ անիրականանալի ցանկատեսութիւն:

Երկրի մագնիսականութեան եւ առնչվող ուժին գաղտնիքը առայսօր չէ յայտնաբերուած, չէ պատճառաբանուած: Այդ ուղղութեամբ կատարուած բոլոր փորձերը բաղձալի եւ արգասաւոր արդիւնքով չեն եզրայանգուած:

Մարդ արարածը կը շարունակէ մնայուն եւ իրաւ արժեքներ ստորագասող, դրախտը վանող, ու միանգամայն՝ երկրաւոր կեանքը, փառատենչութիւնը, հեշտասիրութիւնը, վայելքը նախապատիւ դատող իր շեղ ընթացքը:

Ինչո՞ւ, ինչպէ՞ս եւ մինչեւ ե՞րբ հարցադրումները կը շարունակեն մտատանջել մեզ...:

Չարիքներու արմատը պետք է որոնել դրամապաշտութեան եւ

փառասիրութեան մէջ:

Անհամար թերութիւններով, անպարագիծ անբաւարարութիւններով ու բացասականութիւններով հանդերձ, գարմանալիօրէն աշխարհ կը մնայ ցանկալի եւ պաշտելի բազմամիլիոն մարդոց համար, որոնք կուրորէն բռնած են ճշմարիտին, ազնիւին ու վսեմին հակադրուող մոլոր ուղին:

Կը մնայ մեզի յուսալ, որ մարդ եակը անպայման կը վերատեսէ իր վարքն ու կենցաղը, կը հրաժարի դէպի խաւար ու կորուստ առաջնորդող կործանարար գնացքէն, կը թիպարէ հոսանքն ի վեր՝ որդեգրելով գիտութեան, լոյսի եւ առաքինութեան փրկարար ճանապարհը:

### Corona-virus...

Սկզբը՝ էջ 10

բառարաններուն մէջ:

Արդ, մեր բառարանները, գոնէ արեւմտահայ իրականութեան մէջ, չեն յաջողած լեզուի հարագատ թարգմանը դառնալ՝ մասնաւորաբար **ժահր** բառի պարագային, քանի որ աւելի քան դար մըն է այս եզրով մեր մէջ բնորոշուած են ենթամարդկային կային գանազան մանրէներ: Եւ ճիշդ այս աւանդութիւն վրայ յենելով է, որ արեւմտահայ գրեթէ բոլոր արդի թերթերը սփիւռքի մէջ **corona virus**-ին իսկոյն տունին **քորոնա ժահր** կամ **գորոնա ժահր** անուանումը, ինչ որ Սուրբ հոգիի ներգործութեամբ չբուսաւ մեր մէջ, այլ արդէն կար ու ծանօթ էր, թէկուզ արձանագրուած ըլլար:

Արեւելահայ իրականութեան ծանօթ չէմ. ենթադրելի է, որ այստեղ ան երբեք ալ մանրէի յատկացուած չէ, մանրէ բնորոշած չէ: Սակայն ենթադրութիւն մըն է այս:

Եւ ահա այս պատճառով ալ ոչ մէկուն մտքէն անցաւ **կորոնա ժահր** կոչել գայն, ինչպէս արեւմտահայերէնի մէջ է, որ հայացուցած է **virus**-ը, սակայն պահած է **corona**-ն, որ պարզապէս **թագ** կամ **պսակ** կը նշանակէ:

Այս բացատրութեանց լոյսին տակ, կրնանք դիւրաւ եզրակացնել, որ այդ եզրին ամբողջական հայացումը պիտի տայ **«պսակածէ ժահր»**:

Կը մնայ, որ վաղը եւեթ, քայլ մը աւելի առաջ երթալով, այսպէս ալ կոչեն գայն արեւմտահայ թերթերը՝ ամբողջութեամբ հայացնելով եզրը:

Եւ սրտագին կոչ ուղղենք մեր արեւելահայ եղբայրներուն, որ հետեւին մեզի՝ այս մէկն ալ գումարելով այն հարիւրաւոր օտար եզրերուն վրայ, որոնք հայանալու կը սպասեն:

Ծանօթ. - Բարեկամ մը առաջարկած է **«պսակածէ վարակ»** անուանումը:

Այս եզրին անպատեհութիւնը հետեւեալն է:

Վարակ-ը ընդհանրական բնոյթ ունի. ան կը տրուի ամեն տեսակ ման-

րէի:

Մինչդեռ ինչպէս **virus**-ով, այնպէս ալ **ժահր**-ով կը բնորոշուին ենթամարդկային մանրէները, այսինքն՝ այնպիսիները, որոնք տեսանելի չեն մանրադիտակով եւ որոնց գոյութիւնը կամ ինքնութիւնը կը հաստատուի մասնաւոր, աւելի բարդ հետազօտումներով:

=====

Խնդրոյ առարկայ ժահրը կամ մանրէն **պսակածէ** կոչուած է որովհետեւ ունի ճիշդ ականագարդ եւ օղակածէ պսակի մը, թագի մը ձեւն ու տեսքը, որ ահաւասիկ՝ Պսակածէ ժահր

### ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ...

Սկզբը՝ էջ 7

րուն, մեծ եղած է, երբ հայութեան մեծ բաժինը թրջախօս ըլլալով այբուբենն անգամ չէր գիտեր եւ այդ գրադարանին ճամբով, հեգելով ու կմկմալով սկսած է հայ գիրին ու գրականութեան հետ առնչութիւն ունենալ: Իսկ միութենական տարրի դաստիարակութեան մէջ գրադարանը մեծ ներդրում ունի:

Յետեւաբար, մեր սերունդը եւ աւելի երեցները, կը յիշեն «Քրիստափոր» գրադարանի անցեալի կեդրոնը, ուր կը գտնուէր Յայ երիտասարդաց Միութեան կամ ՅԱԸՄ-ի Թիլէլ պողոտայի ակումբի հնամենի արաբական բակի երդիքին տակ, շքամուտքէն յետոյ՝ բակին ձախ թեւին վրայ, փոքր սենեակի մը մէջ:

Պատմական կարեւորութեան համար կը նշենք, որ 1961 թուականի աշնան բովանդակ Սուրիոյ տարածքին ծայր առած ՅՅ Դաշնակցութեան անդամներուն դէմ կատարուած յայտնի իրադարձութիւնները պատճառ դարձած էին, որ համատարած սարսափն ու վախը մթագնեն ու ջլատեն կենսունակ, հայաբոյր Յայէպը: Վերոյիշեալ ղեկավարներն բերումով, ամայացած էր Թիլէլ պողոտայի ակումբը եւ անոր հետ գ ու գա-

հեռաբար «Քրիստափոր» գրադարանի գործունեութիւնը: Գրադարանը տարիներ փակ մնալէ յետոյ իր դռները վերակազմուած եռանդամ կազմով, կրկին կը բանայ՝ 1967 թուականին:

Այդ մէկ սենեականոց գրադարանը գիրքերու շտեմարան մըն էր, որուն չորս պատերը, գետնէն մինչեւ առաստաղ ծածկուած էին հարուստ հատորներով, փոքրածաւալ կամ հաստափոր հազարաւոր մատեաններով: Կազմուած ու թուագրուած հատորները կը յորդէին դարաններէն:

Թիլէլի գրադարանը, կիրակի օրերը խճողուած կ'ըլլար գիրք պահանջողներով, թէեւ Յինգաբթի օրերն ալ բաց էր գրադարանը: Անըկարագրելի աշխուժ ու խանդավառ եռուգեմ մը կը տիրէր հոն, փոխան ջնջին հատուցման, քանի մը շաբթուան համար գիրք ապահովելու:

Այստեղ, դռները բաց, ընթերցողին կը սպասէին գրադարանի ինքնանուէր աշխատողները, որոնք պատրաստ էին մշտաժպիտ ընդունելու ընթերցողներուն, գրուցելու անոնց հետ, խորհուրդներ տալու եւ լուսաւորելու անոնց ճանապարհը:

Այդ օրերու գրադարանավարները, դեղագործներու նման ուղղութիւններ կու տային ընթերցողին, յատկապէս պատանի տարիքի ընթերցասերներուն, անոնք որոնք նոր փորձ կը կատարէին գիրք կարդալու:

Դժուարութեամբ ձեռք կը ձգէինք մեր պահանջած գիրքերը: Պահանջուած գիրքի գրաւուած ըլլալուն պատճառով քանի կիրակիներ ձեռքերնիս դատարկ գրադարանէն դուրս եկած ենք գլխակախ:

«Քրիստափոր» գրադարանի բեղուն գործունեութեան շրջածիրին մէջ տեղ գտած է գրադարանի կողմէ հրատարակուած պրակներ: Անոնցմէ կ'արժէ նշել «Շողական» խորագրով երգարանի պրակները, յատկապէս Յայոց ցեղասպանութեան յիսնամեակին առիթով լոյս ընծայուած պրակ թիւ 3-4-ը:

(շար. 1)

### «ԳԱՆՁԱՍԱՐ»

#### ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹԻ ԱՆՁՆԱԿԱԶՍ

Խմբագիր՝ Զարմիկ Զիլբերշեան-Պողիկեան  
Սրբագրիչներ՝ Զեփիւռ Պապիկեան-Աւագեան  
Յուշիկ Ղազարեան  
Զեւաւորող՝ Յովսէփ Զալօղլեան  
Գրաշար՝ Անի Թովալեան-Սարուխան  
Արաբերէն լուրերու թարգմանիչ՝ Մարէն Պապեան  
Կայքէջի պատասխանատու՝ Քրիստ Խրոյեան  
Լուրերու պատասխանատու՝ Լուսին Ապաճեան-Զիլբերշեան  
Հաշուապահ՝ Սեւակ Կիլվանեան

- Ծանուցողներէն եւ աշխատակիցներէն կը խնդրուի ծանուցումներն ու յօդուածները խմբագրատուն ուղարկել ամենէն ուշը Երկուշաբթի օրերը:

- Նախընտրելի է յօդուածներն ու թղթակցութիւնները ուղարկել գրաշարուած:

- Խմբագրատուն ուղարկուած նիւթերը, հրատարակուին կամ ոչ, չեն վերադարձուիր:

- Խմբագրութեան վերապահուած է ստացուած յօդուածներու հրատարակելու կամ չհրատարակելու որոշումը:

- Զեր ծանուցումներն ու յայտարարութիւնները կարելի է հրապարակել «Գանձասար»-ի տպագիր տարբերակին եւ կայքէջին միջոցով:





Ռաֆֆի Սիլահեան

## ՏԵՂԱԿԱՆ

### Լուրեր Սուրիոյ Մարզական Կեանքին

- Սուրիոյ պասքեթի աղջկանց Բ. դասակարգի ախոյեանութեան ամբողջացման փուլի մրցումներուն, ՅՄԸՄ-ի աղջկանց խումբը Համայնի մէջ տեղի ունեցած մրցաշարքին կատարեց երեք ճակատագրական մրցում,




որոնց ընթացքին արձանագրեց մէկ յաղթանակ եւ երկու պարտութիւն: Առաջին օրը ՅՄԸՄ-ի աղջիկները յաջողեցան պարտութեան մատնել Համայնի Մահարտէ խումբը՝ 62-52 արդիւնքով: Մրցումին բարձրագոյն կէտ Նշա-Նակողն էր ՅՄԸՄ-ի խաղացող Մեդրիկ Եագուպեան՝ 35 կէտ: Երկրորդ հանդիպումին ՅՄԸՄ-ի մրցակիցը դարձաւ Դամասկոսի ճարամանան: Հանդիպումը ավարտեցաւ 53-50-ով, ի նպաստ մրցակիցին: Հաւաքի վերջին օրը ՅՄԸՄ-ի կազմը ենթարկուեցաւ իրաւարարներու անարդար որոշումներուն: Այս մասին յայտնեցին նաեւ դաշտ գտնուող պասքեթի մասնագետները: Լաթաքիոյ Յրթթինը մեծ դժուարութիւն ունեցաւ արձանագրելու իր երրորդ յաղթանակը, իրաւարարներու կողմնակցութեան պատճառով: Աւարտին, ՅՄԸՄ-ի կազմը արձանագրուած կէտերու տարբերութեամբ գրաւեց աղիւսակի երկրորդ դիրքը եւ Յրթթինին հետ փոխանցուեցաւ յաջորդ փուլ: Աւելցնենք, որ սոյն փուլին ՅՄԸՄ-ի խմբակին մաս կը կազմեն նաեւ ՀԵԸ-ի աղջկանց խումբը, ինչպէս նաեւ Լաթաքիոյ Թատամոնն ու Դամասկոսի Ֆեթիհա-ը:

- Սուրիոյ փինկ փոնկի 11-ամեայ խաղացող Հընտ Չազա ստացաւ Թոքիոյ 2020-ի ողիմպիական խաղերու մասնակցութեան պատիւը, Յորդանանի մէջ պարտութեան մատնելէ ետք Լիբանանի հաւաքականի մարզիկ, 43-ամեայ Մարիանա Սահակեանը՝ 4-3 արդիւնքով: Չազա դարձաւ ամենէն փոքր մարզիկը, որ իր մասնակցութիւնը պիտի բերէ ողիմպիական մրցումներուն:

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

### ՌԱՖԱՅԷԼ ՆԱՍԱԼ ԴԱՐՁԱՎ ԹԵՆԻՍԻ ՄԵԶՍԻԷԻ ՄՐՅԱՇԱՐՔԻՆ ԱՆՈՅԵԱՆԸ

Սպանացի թենիս խաղացող Ռաֆայել Նատալ երրորդ անգամ ըլլալով յաջողեցաւ ձեռք ձգել Մեքսիքի թենիսի բաց մրցաշարքի ախոյեանութիւնը, ավարտական մրցումին պարտութեան մատնելով ամերիկացի Թէյլըր Ֆրիտզին: Նատալի յաղթանակը եղաւ 6-3 եւ 6-2 արդիւնքներով: Աւելցնենք, որ սպանացի խաղացողը սոյն կոչումին տիրացած է նաեւ 2005 եւ 2013



թուականներուն: Կիներու մրցաշարքին, անգլիացի Հիտզ Ուաթսոն պարտութեան մատնեց քանատացի Լիլա Ֆերնանտէզը 6-4 / 6-7 / 6-1 արդիւնքով:

### ԼԻՎԵՐՓՈՒԼ ԻՐ ԱՌԱՋԻՆ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ ԿՐԵՑ



Անգլիոյ ախոյեանութեան աղիւսակի առաջին դիրքը գրաւող Լիվըրփուլը, չյաջողեցաւ շարունակել իր յաղթարշաւը եւ կրեց այս տարեշրջանի իր առաջին պարտութիւնը: Լիվըրփուլ զիջեցաւ 16-րդ դիրքը գրաւող Ուաթֆորտին եւ 3-0 արդիւնքով պարտութեան մատնուեցաւ: Լիվըրփուլ ետ մնաց 79, 22 կէտերու տարբերութեամբ, իրեն յաջորդեց Մանչեսթըր Սիթին:

### ՆԵՅՄԱՐ ԿՐՆԱՅ ՄԱՍՆԱԿՑԻԼ ԹՈՔԻՈՅԻ ՈՂԻՄՊԻԱԿԱՆԻՆ

Պրագիլի հաւաքականի եւ ֆրանսայի Փարիզ Սան ժերման խումբի յարձակողական խաղացող Նեյմար, կրնայ իր մասնակցութիւնը բերել 2020-ի Թոքիոյի ողիմպիական խաղերուն: Ըստ Todomercado-ի, Պրագիլի Ֆուլթոնի Դաշնութիւնը յառաջիկայ օրերուն պիտի բանակցի ֆրանսական ակումբի ղեկավարներուն հետ, առնելու Նեյմարի մասնակցութեան անոնց հաւանութիւնը, իսկ եթէ ակումբը մերժէ, Նեյմար պիտի չմասնակցի ողիմպիականին: Նեյմար 2016-ին իր մասնակցութիւնը բերաւ Ռիօ տէ Ժիներոյի ողիմպիականին եւ դարձաւ ոսկի մետալակիր:



### ՍԱՐԻՆ ՊԻՏԻ ՀԵՌԱՅՈՒԻ ԻՐ ՊԱՇՏՈՆԵՆ

Իտալիոյ ախոյեան Իւվենթուսի վարչակազմը մտահոգ է խումբի ընթացքէն: Ան լրջ օրէն սկսած է փրկուիլ կազմի գլխաւոր մարզիչին փոխարինողը: Ըստ La Repubblica-ի, Իւվենթուսի ղեկավարութիւնը կը մտածէ հեռացնել Սարին, եթէ խումբը դուրս մնայ Չեմպիոնզ Լիկի մրցաշարքէն կամ պարտութիւն կրէ Իտալիոյ ախոյեանութեան 26-րդ փուլի մրցումին: Տարածուած տեղեկութիւններուն համաձայն, ակումբի պատասխանատուները բանակցութիւններ սկսած են վարել Մասիմիլիանօ Ալեկրիին հետ, որ հինգ անգամ Իւվենթուսի հետ արժանացած է Իտալիոյ ախոյեանութեան:



### ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Տօնյեան ընտանիքը շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, սուրճատուութեամբ կամ հեռաձայնով մասնակից դարձան իրենց հարգատիւն:

### ՀԱՆԳՈՒՅԵԱԼ

### ԶՈՒՄԱԹ ՏՕՆՈՅԵԱՆԻ

մահուան սուգին: (Ծնեալ՝ ՀԱՊՈՅԵԱՆ)

Հանգուցեալի քառասունքի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 8 Մարտ 2020-ին, յաւարտ Ս. եւ Անմահ Պատարագի, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, Նոր Գիւղ-Հալէպ:

Յետ հոգեհանգստեան արարողութեան ցաւակցութիւնները պիտի ընդունուին եկեղեցւոյ ներքնասրահէն ներս:



Երկուշաբթի 9/3



11° 23°

Երեքշաբթի 10/3



9° 20°

Չորեքշաբթի 11/3



10° 20°

Հինգշաբթի 12/3



12° 20°

Ուրբաթ 13/3



10° 16°

Շաբաթ 14/3



9° 16°

Կիրակի 15/3



8° 16°



Հովանավորությամբ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Ա. Եպս. Չօպուեանի, կազմակերպությամբ «Քրիստափոր» գրադարանի վարչութեան, Կիրակի, 1 Մարտ 2020-ին ԱՄԺՏ «Լեւոն Շանթ» սրահէն ներս, հանդիսութեամբ եւ ցուցահանդէս վաճառքով յիշատակուեցաւ «Քրիստափոր»

## ԳԻՐԸ ԱՉԱՏՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԸ ԿԸ ԲԱՆԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՆ ԴԻՄԱՅ. ՀԱՆԴԻ «ՔՐԻՍՏԱՓՈՐ» ԳՐԱԴԱՐԱՆԸ 100 ՏԱՐԵԿԱՆ Է

արդէն իսկ գիրքին հեղինակին կողմէ մակագրուած ու նուիրուած էր գրադարանին: Ներկաները հե-

մախմբուած երիտասարդներուն: Գրադարանի վարչութիւնը համայնքի գաւակներուն մէջ գիրքի հանդէպ հետաքրքրութիւն ստեղծելու համար աշակերտներու յատուկ ծրագիրներ իրագործած է վերջին տարիներուն, ինչպէս՝ «Պատմեք Միասին» եւ ընթերցանութեան եւ ուղղագրութեան մրցումներ:

րիներու Սուրբ ծանօթ պատերազմական պայմաններուն բերումով, հայ գիրքը քաղաքին մէջ անտէր պիտի մնար: Վարչութիւնը շատ մը գիրքեր կորուստէ փրկելու համար Հալէպէն մեկնողներուն անհատական գրադարաններուն տիրութիւն ըրաւ, ինչպէս նաեւ քաղաքիս փլատակներուն տակ փճանալու մատնուած հայ գիրքերը փրկելու պատասխանատու գործը յանձն առաւ:

Յայտագիրին ամենատպաւորիչ բաժինը ընթերցասեր աշակերտներու տեսագրուած խօսքերն էին: Աշակերտներ, որոնք մասնակցած էին



գրադարանի 100-ամեակը: Ձեռնարկին ներկայ էին Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Ա. Եպս. Չօպուեան, Հայ Կաթողիկէ համայն-

տաքրքրութեամբ նաւարկեցին գիրքերու ծով աշխարհին մէջ: Ապա հանդիսավարը իրաւիքեց համայնքապետները, հիւպատոսն ու Պատկան Մարմինի ներկայացուցիչը բացումը կատարելու «Քրիստափոր» գրադարանին 100-ամեակին առիթով Քրիստափոր Միքայելեանի նոր պատ-



Ներկաները այնուհետեւ դիտեցին Գրադարանի 100-ամեայ գործունէութեան մասին պատմող կարճ տեսագրութիւն մը:

Շաւարշ Նարոյնիի «Կարօտ Հայ Լեզուի» քերթուածը ասմունքելով Ռիթա Կաղեան-Տիքալիքեան

գրադարանի վարչութեան ձեռնարկներուն, կը հաստատէին, որ շատ բան սորված են առնչուելով գիրքի լոյսին ու իմաստին հետ: Փաստօրէն դպրոցական մրցոյթները իրենց նպատակին ծառայելով յաջողած էին ներգրաւել որոշակի թիւով աշակերտներ: Անոնցմէ մէկը կը յայտնէր.

«Ընթերցանութեան մրցումին ընթերցուած բաժինը անգամ մը եւս կարողալու նպատակով այցելեցի գրադարան: Գիրքերու ծով աշխարհի մտայ ու սկսայ հերթաբար այցելել ու գիրքեր առնել»: Ուրիշ մը պատմեց իր փորձառութիւնը «Պատմեք Միասին» ծրագիրին մէջ, շնորհակալութիւն յայտնեց վարչականներուն օգտաշատ պատմումներուն համար ու յաջողութիւն մաղթեց բոլորին:

Օրուան բանախօսն էր հրապարակագիր Աւօ Գաթրճեան: Ան նախ անդրադարձաւ գիրքին անփոխարինելի դերին մարդ անհատի կազմաւորման գործընթացին մէջ, ապա յայտնեց, որ «Քրիստափոր անուանումը երբեք պատահական չէ եւ իր մէջ կ'ամփոփէ խորիմաստ գաղա-



քի ներկայացուցիչ Արժ. Տ. Կոմիտաս Զինյ. Տատաղեան, Հայ Աւետարանական Համայնքի Համայնքապետ Վերապատուելի Յարութիւն Սելիմեան, ՀՀ Հալէպի Գլխաւոր Հիւպատոս Արմէն Սարգիսեան, Սուրբ խորհրդարանի երեսփոխան Ժիրայր Ռէիսեան, Պատկան Մարմինի, միութիւններու ներկայացուցիչներ եւ հոծ



րաստուած կիսանդրին, որուն հեղինակն էր քանդակագործ Վարդգէս Պարսումեան: Վստահ եւք, որ կիսանդրին այցելուներուն մշտապէս պիտի յուշէ հայ մտաւորականութեան,



հմայիչ առողջանութեամբ մեր մայրենիին գովքը հիւսեց:

Ապա խօսք առաւ վարչութեան ատենապետ Յակոբ Ալապոզանեան: Ան յայտնեց որ «Քրիստափոր» գրադարանը Հալէպ հասած է տարագրութեան օրերուն, Այնթապէն, ապա մէքերեց «Պատմութիւն Այնթապի Հայ Յեղափոխական Դաշնակցութեան» գիրքէն «Քրիստափոր»



բազմութիւն մը: Ներկաները դիմաւորուեցան Համազգայինի «Բ. Կաւաչեան» երաժշտանոցի ուսուցչական կազմէն Ռուզան Պարսումեանի (դաշնամուր) եւ Նայիրի Նազաշեան-Մինասեանի (ֆլիւթ) հաճելի նուագով: Անոնք հայկական մեղեդիներով ջերմ մթնոլորտ մը ստեղծեցին սրահին մէջ:

Ցուցահանդէսին բացումով ներկաները այցելեցին անոր գանազան բաժինները, բացատրութիւն լսելով վարչութեան ատենապետէն: Ցուցահանդէսը հարուստ էր գանազան գրողներու ու տարբեր թուականներու լոյս տեսած ընտիր ու հետաքրքրական գիրքերով, որոնցմէ բաժին մը

եան, գիր ու գրականութեան դերն ու տեղը ազգային կեանքի զարթօնքին մէջ:

Բացման խօսքով հանդէս եկաւ Գրադարանի վարչութեան անդամ Սարին Խալոյեան, որ հակիրճ բացատրութիւն մը տալով «Քրիստափոր» գրադարանի 1919-2019՝ 100 տարիներու վրայ երկարող աշխատանքին ու առաքելութեան մասին, ասելցուց, որ գրադարանը գանազան կեդրոններու մէջ գործած է, նախ ճտեյտիէի ապա Թիլէի ակումբներուն, իսկ ներկայիս ԱՄԺ Տան «Լ. Շանթ» սրահին կից: Անոր աշխատանքը շարունակուած է տարիներու ընթացքին, շնորհիւ անոր շուրջ հա-



գրադարանին առնչուող հետեւեալ տողերը. «Անհատներու քով մնացած 17 հատոր գիրքերով հիմնադրեցինք «Քրիստափոր» գրադարանը»: Ալապոզանեան լուսարձակի տակ առաւ գրադարանի վերջին տարիներու ծառայութիւնը ու ըսաւ. «Վերջին տա-

փարներ: Գրադարանին անունը տրուած է ի յիշատակ հայ հասարակական, քաղաքական գործիչ, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան հիմնադիր Քրիստափոր Միքայելեանի»: **Սեւանա Հալլաճեան** Շար.՝ 19 8